

# ԿՈՄՈՒՆԻՍՏԵՐԸ

ԽԾՀԻՐ ԺՈՂ. ԿԵՆՏՐՈՆ. ՀՐԱՏԱ-  
ՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ. ՄՈՍՎԻ, 1929

Ա. ՖՈԴԵՎԵԼ, Գ. ՆԻԿԻՖՈՐՈՎ, Ս. ՄԵԼՅՈՆՅԱՎ

19 NOV 2010

891-71

Տ-14

ար.

4

# ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԸ

0  
00  
00

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐԻ  
ՃՈՂՈՎԱԾՈՒ



9/3  
44

05.09.2013

14.660

Ա. Ֆ. ԳԵՂԵՑԵՎ

## ԿՈՄԻՍԱՐՆԵՐԸ

### I

Զինվորական գնդի իսկական անունն եր՝ Ամգունյան 22-րդ հրացանաձիգ գունդ, իսկ նրա շարքային մարտիկները բոլոր պաշտոնական հրամաններում կոչվում են ժողովրդական բանակայիններ<sup>\*)</sup>: Սակայն խրամատներից մի տարի դուրս չեկած մարդը, վոր անթիվ վոջիլներ ե կերակրել, վոր անցել ե տայգայի բոլոր կածանները՝ Սախալինից մինչև Ամուր, սովորել եր անիշխանության և անպատճե մնալուն և վախենում եր կարգ ու կանոնից ու դիսցիլինից: Նրան անսովոր եյին թվում նոր անունները, վոր դրվում եյին հազար ու մի զրկանքներով ձեռք բերված հին անունների տեղ: Յեկ 22-րդ Ամգունյան գնդի մարտիկներն իրենց շարունակում եյին անվանել պարտիզաններ, իսկ իրենց գունդը հին հրամանատարի անունով՝ Սեմենչուկի ջոկատ:

Հին անվան համար կովում եր ամբողջ գունդը հրամանատար Սեմենչուկի գլխավորությամբ, իսկ նորի համար՝ գնդի կոմիսար Զելնոկովը:

<sup>\*)</sup> Հեռավոր Արևելքում բանակը չեր կոչվում կարմիր, այլ ժողովրդական - հեղափոխական:

Դա մի համառ ու դաժան կոփվ եր հին ու նոր անվան համար, սևահող հովիտների ու ձորերի մեջ սնված ու մեծացած պարտիզանական տարերքի ու հալոցարանների մեջ թրծված ու յերկաթուղագերում կոփված առողջամիտ դասակարգային կամքի միջև։

Հնի ու նորի կոփվ եր. ուժերը անհավասար եյին, Յեվ վոչ թե այն պատճառով, վոր Զելնոկովը միայնակ եր, այլ և այն պատճառով, վոր այդ բանը կատարվում եր մի տեղում, վորտեղ վագրանկաներն և յերկաթուղիները քիչ եյին, վորտեղ որն այնքան կարճ եր իսկ գիշերն յերկար, վորտեղ անտառը խիտ ու մույլ եր, ողը խոնավ ու թունավոր՝ ճահճային գոլորշիներից, վորտեղ գաղանն անտառներում ուժեղ ե ու անվախ, իսկ մարդը անհոգի ու թափամազ՝ ինչպես գաղան։

Սևմենչուկի ջոկատն ավելի ուժեղ դուրս յեկավ քան Ամգունյան գունդը։ Դա տեղի ունեցավ յեղենուտ գետի ջարդից հետո թաց ու մառախլապատ մի առավոտ, կարմիր ճակատի ճախ թերում։

— Ես ուր են մեզ բերել — գոռում եր մի հաստ ծառի կոճղի վրայից մի խճճած մազերով բարձրահասակ տղա։

Գլխից մինչև վոտքը չարություն եր շնչում, կես տարի չփոխված կեղասոս շորերից կախված ծոպերով, նա այդ գրության մեջ տայգաների դայլի եր նմանվում։

— Մենք այստեղ կորչելու յենք. մեզ ծախել են... Վլադիմիրաստոկը գրավված ե, Խաբարովսկը գրավված

ե, Եսորեղուց կզբավեն իմանը, ել ուր կարող ենք գնալ։ Մենք պարտիզաններ ենք, ամուրցիներ։ Մենք սառչում եյինք սովորաներում մեր հացի ու ընտանիքի համար։ Արդեն տուն գնալու ժամանակ ե։ Բավական ե ինչ վոջիլներին կերակրեցինք, գնանք, Ամուրն անցնենք։ Այնտեղ ել Խորհրդային Խշանություն ե — մենք ենք հաստատել։ Թող ծովափցիք իրենք իրենց յերկիրը պաշտպանեն։ Թող Զելնոկովս ինքը կովի իր հոսած ձկներով միասին...»

Յեվ այդ մարդկային մարմինները, դեմքերը, պատառուած շինելները, սվինները, փամփուշտակալները, պայուսակներն ու մարդկանցից կեղասոտված յեղենիների ճղները, այդ բոլորը միասին ձուլվել եյին մի դեմքի մեջ, վոր գոռում եր.

— Անցնենք Ամուրը, անցնենք Ամուրը...

— Բավական ե արդեն...

— Լավ, ինչպես կանցնենք Ամուրը, ասում եր Զելնոկովը, աշխատելով պահել իրեն. — Ֆրոնտի միջով չենք կարող անցնել։ Ճահճներով ել դժվար ե անցնել։ Մնում ե Ուսսուրին։ Ինչպես կանցնեք այդ գետով, չե՞ վոր շոգենավեր չկան...

— Սռւտ ես խոսնեմ, գոռում եյին ամբոխի միջից — խարում ես։ Նավ կա, հապա ապրանքներն ու բեռներն ինչնվագ են փոխադրվում... Սրիկա...

— Այդ շոգենավը ձեզ չի վերցնի...

— Մենք ինքներս նրան կվերցնենք...

— Նա միշտ առանց են ել ծանրաբեռնված և  
լինում...

— Կդասարկենք... Պահ, կարծես աշխարքում բան  
չենք տեսել...

— Ախար բանն այդ չե — չեր զիջում Զելնոկովը,  
մենք ճակատը մերկացնում ենք. մեր գնալով ամ-  
բողջ շրջանը կորչում ե:

— Հապա ի՞նչ ե, մենք պահապաններ ենք, ինչ  
ե — առաջ ե գալիս զզզզված մազերով տղան. — ի՞նչու  
չեյիք պահում պլիմորցիներին (ծովափեցոց). ով գիտե  
նրանք հիմա թիկունքում չեն նստած, հագնված ու  
կուշտ. շանից շատ են դարձել շտաբները.

— Ճիշտ ե, Մարտին, թիկունքում, Ամուրի լայն-  
քով մին գալիքեներ են բաց թողել:

— Զի կարելի այդպես դատել, ընկերներ: Զե վոր  
մեզ վրա յել ե դրված պատասխանատվությունը:  
Յեթե մյուսները փախչում են, դա չի նշանակում  
վոր մենք ել պետք ե փախչենք: Յես տեղեկություն-  
ներ ունեմ վոր Վլադիմարովի արդեն հաշտության  
բանակցություններ են մզգում: Յեկեք սպասենք:

Զելնոկովը ուժեղ բամբ ձայն ուներ և խստում եր  
ըստ սովորության կես համոզումի և կես հրամայո-  
ղական տոնով: Բայց մասսան չեր լսում կոմիսարին:  
Յերեկ մթերքների պատճառով նրա հետ կովելիս, նա  
դեռ զգում եր կոմիսարի մեջ մի ուժ և ակամա  
հպատակում եր նրան: Դա առաջվա որերի նման  
գիտակից հարգանքը չեր իրենց ավագ ընկերոջ

հանդեպ, այլ ուղղակի հեղափոխությունից արմատա-  
խիլ չեղած պատկառանքի վերջին մնացորդներն եյին  
իշխանության դիմաց: Այդ զգացմունքը ավելի յեր  
ուժեղանում, քանի անկախ, խիստ ու անվախ եր  
պահում իրեն պետը: Սակայն այսոր դա այլևս չեր ող-  
նում: Այսոր մասսան չեր վախենում ու ատում եր կո-  
միսարին: Նա միակ խոչնդուտն եր հանդիսանում նրա  
ճանապարհին: Հարցը պարզ ե: Ել ինչի՞ յե այդ խո-  
սակցությունը:

— Բավական ե, հերիք յեղավ — գոռում եր ամ-  
բոլը:

— Կորչի կոմիսարը. իրանն արավ, վերջացրեց,  
հրաժարվիր, դայնշ...

Կանաչով ծածկված ձմեռանոցի հողաթմբին նստել  
եր Սեմենչուկը և սպասում եր: Խռոված ամբոխի  
մեջ տարորինակ եր տեսնել նրա թագնված անտար-  
բեր գեմքը: Յեկ մի քանի անգամ բոնելով նրա իրեն  
դարձրած, սպասողական հայացքը, Զելնոկովը կար-  
ծում եր, վոր դա միակ մարդն եր, վոր կարող եր  
գեռ պահել գունդը: Բայց Սեմենչուկը լուռ եր:

Նա ի՞նքն ամուրցի յեր, նրա զահլան ել եր գնացել  
կռվելուց, իսկ ամբոխի համակրանքի զգացմունքներն  
այնքան փոփոխական են, վոր չարժեր իր հեղինա-  
կությամբ ուրիշի գործի համար գիմագրավել:

Զելնոկովը սովորական խոսքեր եր ասում, իսկ նրա  
մտքերը նյարդայնորեն ու շտապ պտույտ եյին գա-  
լիս զլխում՝ մի ուրիշ յելք փնտրելով: «Այ անա-

սուն — մատածում եր նա Սեմենչուկի մասին. — վաղուց գնդակահարվելու եր, զոնե մի խոսք ասեր, հանգստացներ...»

— Անցնենք Ամենը — պոռթկում եր տայգայովի խորձորերի վրայով տարերային հազար գլխանի գոռոցը:

— Լսիր, Սեմենչուկ, ասաց Զելնոկովը ծովելով հրամանատարի կողմը, յեթե նրանք գնան, դու յես պատասխանատուն:

Սեմենչուկը ծաղրաբար ժպտաց.

— Յես ինչ հաշիվ ունեմ... Իմ գործը մեծերից չե:

— Առաջ ես խոսում — չկարողացավ իրեն զսպել Զելնոկովը. — Դու ծախում ես ամբողջ ճակատը մի հրամանատարական նշանի համար...

— Ի՞նչ...

Սեմենչուկը վեր թռավ խայթվածի պես: Նրա լարված կեցվածքի մեջ մի ինչ վոր՝ կատվին հատուկ շարժում սահեց անցավ: Նույնիսկ վագրի մորթու կիսավերաբիույի գեղին մազը կարծես ցցվեց, կարծես կենդանի լիներ:

— Ընկերներ... Լսեցի՞ք դուք, ինչ ասաց կոմիսարը, դուք լսեցի՞ք թե նա ինչ ասաց... — Սեմենչուկի ձայնը դողում եր շինծու զայրույթից: Մենք, վոր ամբողջ տարի տառապել ենք ճակատի բարձունքներում, ընկել ենք գնդակների տակ, խեղդվել ենք ճահիճներում, կեր ենք դարձել մոծակներին, բանից դուրս ե գալիս վոր մենք հեղափոխության դավաճաններ ենք յեղել հա: Իսկ նրանք, վոր յեկել են

ամեն բան պատրաստած ժամանակ հազել են ֆրենչ-ներն ու նստել մեր վզներին, նրանք են փրկողները... — Կորիր, գնա, — զոռաց նա կատաղած:

Նրա հաստ պարանոցը ուռավ արյունակալած յերակներից ու լայն մկանոտ դեմքը լցվեց արյունով:

Զելնոկովը քաշեց ատրճանակն ու մոտեցավ մի քայլ գեպի հրամանատարը:

— Յեթե դու մտածում ես զրանով խաղալ քո ոգտեն... ասաց նա չարագուշակ զսպվածությամբ... Սակայն կատաղի վոռնոցը ստիպեց նրան շրջվել մասսայի կողմը: Ամեն տեղից, վորտեղ միայն մարդ եր յերևում, կոմիսարին նայում ելին անողորմ հրացանի փողերի պողպատյա ցցերը:

— Ճեռացեք...

Զելնոկովը թողեց զինապատյանից ձեռքը և մի քանի վայրկյան զննում եր ամբոխը: Ամեն մի փողից նայում ելին նրան սպառնալիքից ու ատելությունից վառվող աչքերը: Աչքեր չելին այլ վողնիներ, մի մի կառը ածուխ: Յեվ վոչ մեկի մեջ համակրանքի զգացմունքի վոչ մի նշույլ չեր փայլում: Վոչ մի նշան: Միայն սպառնալիք ու ատելություն: Գուցե արյուն ու մահ...

Զելնոկովը զլուխը կախեց և դանդաղ իջավ մամուռ բլրակից:

— Կարմիրներ — կանչեց Սեմենչուկը: Յես միշտ ձեզ հետ եմ յեղել, խեկ դուք ինձ հետ... Լսեք իմ հրամանը. Շարվել...

Վիճակաները վայր իջան մեկը մյուսի յետկից,  
Ամբոխի մեջ այս ու այն կողմն անցան վաշտապետ-  
ները:

- Առաջին վաշտ, ժողովկեք...  
— Յերկրորդ վաշտ...

Հրամանների սուր կանչերը անսեղի եյին թվում  
թափուտ յեղենիների տակ, սոված մարդկանց սահմա-  
րձակ մասսայի մեջ և խկույն խլանում եյին հեռու  
մամուապատ մացառուտներում: Վաշտերը շարվում  
եյին շտապ կերպով, ինչպես պատահում եր և սողում  
եյին մութ անտառի խորքը դեպի ցեխոտ ճանապարհը:  
Կոմիսարի թամքած ձին կատաղի խրխնջում եր ու այս  
ու այն կողմը նետվում կապված տեղում: Հարյուրա-  
վոր վոտքերի տակին ճարճատում եր մանր յեղենին:  
— Գոնե հրացաններս ուսերնիս առնենք — ան-  
վճռականորեն առաջարկում եր մեկը:

— Զե մի ինչ, ուսներիս... հնչում եյին դժո՞հ  
ճայները: Մենք դայիշներով ել կտանենք... ին ոե-  
ժիմը հո չի...:

— Հերիք ե, ինչքան մինչև հիմա հրամայեց...

Զմեռվա փարախի մոտ կանգնած մացել եր կոմի-  
սարը և հեռացող ճայների մեջ լսում եր ուրախ հուզ-  
մունքի հնչյուններ և միամիտ, համարյա մանկական  
հափատի նշույներ՝ այս աշխարհում բոլոր չարիքների  
ու զրկանքների վերջանալու մասին:

Յեթե Զելնոկովը ցանկություն ու հնար ունե-  
նար սառը դիտողությամբ վերաբերվելու, նա կդար

այն յեզրակացության, վոր այդ մարդիկ, վոր ճա-  
կատը լքել են, վոչ թշնամի են հեղափոխության  
և վոչ ել դավաճաններ: Նրանց ամբողջ թշվառու-  
թյունը կայանում եր նրանում, վոր նրանք խավար  
եյին, ինչպես իրենց աճեցնող սեահողը, մահու չափ  
հոգնել են կովելուց, իսկ տանը նրանց սպասում  
եյին իրենց սեփական դաշտերն ու հանդերը, խրճիթն  
ու ընտանիքները ու ընտանեկան գրավիչ տաքուկ  
անկյունը: Բայց Զելնոկովը կոշտ կոպտաբաճկոն  
ցեղից եր ծնված, վոր վոչ խրճիթ ուներ, վոչ հողեր,  
չեր իմանում ինչ ե ընտանեկան տաքուկ անկյունը,  
և հակված չեր նման բովեներին անաչառ դատողու-  
թյունների: Նա միայն տեսնում եր վոր կարմիր ճա-  
կատի իրեն հանձնված մասում 12 վերստ լայնու-  
թյամբ մի մի բացվածք ե գոյացել վոր այժմ ել վո-  
չնչով չի կարելի փակել: Այդ անցքով ամեն բովե-  
կարող եյին անցնել յապոնական մասերը և այն ժա-  
մանակ ել վոչ վոքի չի հաջողվի միտինգներ կազմել  
ամբողջ տարածության վրա, սկսած կեղրի գետից  
մինչև վլաղիվաստոկ: Նա այլևս չեր մտածում այն մա-  
սին վոր յենթաղբյալ դեպքերից զեռ շատ առաջ կա-  
րող ե մի պատհական հակառակորդ հետախույզ նրա  
սեփական կյանքին վերջ տալ, բայց դա ինքն իրեն  
հասկացվում եր:

Վոչ. Զելնոկովը հակված չեր անաչառ դատողու-  
թյունների: «Ուռու, սատանի քեթուկ», մտածում եր  
նա Սեմենչուկի մասին:

— Գոնե մի հինգ հոգի տղաներ լինելին հուսալի,  
գնդացիրով... Յես նրան ցույց կտայի «Ամուրից  
դեն»... Բայց հուսալի տղաներ չելին ճարվում, իր  
պարտությունից հետո Զելնոկովը ավելի միայնակ եր,  
քան պայքարի սկզբում:

— Նրա ձին յերասանների մեջ խճճվել եր ու  
դունչը քափ կտրած, աղիողորմ փոնչում եր:

— Սուս, հեյ—բարկացած գոռաց Զելնոկովը:

Նա մի քանի անգամ զարկեց նրան ճիշտուվ յե-  
տեից և ինչ տեսակ վատ հայնոյանք զիտեր, թափեց  
նրա գլխին: Անխուսափելի հարց կար՝ ի՞նչ անել. —  
այդ հարցը ծակում եր հոդնած գանգը: Նա նստեց  
հողաթմբին և սկսեց մտածել: Դա շատ դուրեկան ու  
այնքան ել թեթև զբաղմունք չեր: Կոմիսարը մի որ  
ու զիշեր չեր քնել: Քունքերը զարկում ելին: Նա  
սեղմում եր գլուխը մեծ ու կոշտ ափերով և նրա  
չոր ու հին յեղջերվի մորթու նմանվող ճկվող մազերը  
գլխին վնշերով ծիծաղելի կերպով ցցվել ելին:

Զինվորական գույնի գլխարկն ընկած եր նրա  
վոաքերի տակ ու նրա մեջ ներս ու դուրս ելին անում  
ճահճային խոշոր մըրջյունները: Քայլերի ու մարդկանց  
աղմուկը վազուց լուել եր հեռվում: Միայն աճարքի-  
ների մեջ աղբյուրի մոտ յերկշոտ սողում ելին մահ-  
րայա թռչունները: Կարմիր ճակատի ձախ թեռում  
Ամգունյան գնդի կոմիսարը իսպառ միայնակ եր մնացել:

Նա դանդաղորեն արձակեց գենքի կաշվե պատ-  
յանը և հանեց նագանը: Յերկար ու հետաքրքրու-

թյամբ դիտում եր պողպատը և նույն լրջությամբ  
քաշեց սառը շնիկը: Սակայն նա խկույն չարձակեց,  
այլ վորոշեց ելի սպասել ու մտածել: Նա սովորել եր  
կտրել միայն միանգամ, սակայն և յոթն անգամ չա-  
փելուց հետո:

Յեկ խկապես, նրա մտքերն ուրիշ ընթացք  
ստացան:

— Այսպես չի կարելի—ասաց նա, խիստ նայե-  
լով ձիուն: Ես խոսքերը սակայն նրան չելին վերա-  
բերում, այլ իրեն, կոմիսարին: Նրանց մեջ այժմ չեր  
զգացվում վոչ հուսահատություն վոչ ել չարություն,  
այլ հանգիստ ու դաժան համոզմունք մարդու, վոր  
անախորժ, բայց ճիշտ յեզրակացության եր յեկել:  
Այսպես չի կարելի, նորից նա բարձր կրկնեց—մեկ  
ե՞ քեզ պետք ե գնդակահարեն, բայց յեղածը դու  
պարտավոր ես իմաց տալ:

Այս բանը արդեն չափազանց վորոշ եր հնչում:  
Զելնոկովը առաջ քաշեց ու ծածկեց շնիկը, ատրճա-  
նակը պահեց պատյանի մեջ: Նրա շարժումների մեջ  
հուզմունք կամ վախ չեր զգացվում: Նա վեր բար-  
ձրացրեց գետնից գլխարկն ու սրբեց թաց յեղինու-  
ճյուղով: Նա չեր ցանկանում վոր նույնիսկ իր շորի  
մեջ լիներ թեկուց մի ակնարկ իրաբանցումի մասին:  
Ճիշտ ե նա չկարողացավ պահել իր գունդը, թեպետ  
և պարտավոր եր այդ անել: Սակայն դա դեռ չի նշա-  
նակում, վոր մնացած ամեն ինչ կարող ե գնալ իր  
կամքով, բարձի թողի արած:

Զելնոկովը յետ արավ ձին և թամքին թռչելով  
դուրս յեկավ ճանապարհը: Ձին շպրտում եր դեպի  
այն կողմը, ուր գնաց գունդը, իսկ նա ստիպում եր  
նրան գնալ մյուս կողմը: Մի քանի վայրկյան նրանք  
պտտվում եյին մի աեղում, մինչև վոր նրա համար  
չպարզվեց վոր հանգամանքները փոխել են: Այն ժա-  
մանակ նա յենթարկվեց մարդուն ու կրծուելով լկամը  
քշեց դեպի ճակատի շտաբը՝ Բեյցուխե կայարանը:

## II

Զրահապատի մոտ կանգնած ժողովրդական բանա-  
կայինների հետ զրուցում եր Սոբոլը, յերբ մի ձիավոր  
թանձրաբաշ քափի մեջ կորած դուրս պըծավ թփերի  
միջից և հապճեց շուրջը նայելով սլացավ դեպի շտաբի  
վագոնը:

— Ես ել ինչ մարդ ե, — մտածեց Սոբոլը: Բայց յերբ  
ձիավորն իջավ թամքից, նա իսկույն ճանաչեց Զելնո-  
կովին: Մինչև այն նա չեր հանդիպել նրան ձիու վրա:

Զելնոկովի գալուստը չափազանց անսովոր եր: Սո-  
բոլը իր խոսքը կարեց և արագ վագեց դեպի շտաբը:  
Ամգունյան գնդի կոմիսարը մոայլված դեմքով, վագո-  
նին թինկ տված սպասում եր նրան: Յերկում եր  
վոր նա սաստիկ հոգնել եր: Նրա ձին ել գլուխը կախել  
եր ու տեղն ու տեղը մեխմել:

Սոբոլը ուժ գործ գրեց սեղմելու համար նրան  
մեկնած ձեռքը և մի քանի վայրկյան չեր կարող վոչ  
մի խոսք տսել:

— Հը... վերջապես կանչեց նա խոպտու:  
— Ամգունյան գունդը հեռացավ դիրքից — մեղմ  
ասաց Զելնոկովը:  
— Սուսս... թշշացրեց Սոբոլը ատամները ցավելու  
չափ սեղմելով: Վոչ մեկին վոչ մի խոսք այդ մասին...  
Այստեղ ոդը լիքն ե խուճապով... գնանք վագոնը  
մտնենք...

Սակայն յերբ նրանք մտան Սոբոլի բաժանմունքը,  
ֆրոնտի կոմիսարը ել չկարողացավ իրեն զսպել: Նա  
կատաղած կպավ Զելնոկովի կեղտոտ ֆրենչին և դո-  
ղալով իր եյությունը լցված կատաղի հակասական  
զգացմունքներից, կանչեց բարակ անբնական ձայնով.  
— Ինչպես դու թույլ տվիր: Պետք եր ատամնե-  
րով բոնելիր: Ախր ի՞նչ ե պատահել ձեզ մոտ, Զել-  
նոկով:

— Յես ինչ կարողացա, արի — մոայլ շնչաց նա:  
Սակայն յես չկարողացա համոզել...

— Համոզել... կատաղաբար կրկնեց Սոբոլը — կո-  
միսար... Պետք եր վոչ միայն համոզել, այլ կրակել...

— Բանն այնպես գնաց, վոր յես չեյի կարող  
նույնիսկ ատրճանակս հանել... Նրանք դեպի ինձ ուղ-  
ղեցին հրացանները...

— Իմ ի՞նչ գործն ե այդ: Դու պետք ե նրանց  
պահելիր: հասկանում ես, պարտավոր եյիր: Ինձ չի  
հետաքրքրում թե քեզ կսպանելին նրանք թե չե:

Սոբոլը բաց թողեց նրա ֆրենչը և զրգոված քայլեց  
վագոնում: Նրա փոքրիկ թափթփոված կերպարանքը

այս ու այն կողմն եր նետվում փոշոտած ոթյակում,  
իսկ Զելնոկովի բարձրահասակ իրանը քարացած դամ-  
վել եր տեղն ու տեղը:

— Դու գիտե՞ս թե քեզ ինչ պետք ե անեն — հա-  
ղորդեց հանկարծ Սորովը, շեշտակի կանգնելով գնդի  
կոմիսարի դիմաց:

— Գիտեմ, — ասաց Զելնոկովը:

Սորովը ընկավ մահակալին և մի քանի րոպե լուռ  
նստած եր: Գրասենյակից լսվում եր մեկի անվարժ  
չխկոցը գրամեքենայի վրա:

Այդ լուրթյան մեջ կոմիսարի խոսքերը մի ուրիշ  
տեսակ ելին հնչում:

— Ֆեռոր... — կամաց ձայն տվավ նա Զելնոկո-  
վին. — դու հո չես մոռացել թե վոնց մենք հինգ  
տարի աշխատել ենք հարեւն ստանոկների վրա...

Զելնոկովը ցնցվեց և մի տարօրինակ մեղմ ձայն  
դուրս թռավ նրա շրթունքներից: Սորովը ջղայնորեն  
մատները կոտրատեց և առաջվա նման մեղմ շարու-  
նակեց.

— Յեկ դու... չկարողացար պահել գունդը... չյու-  
սիսային ֆրոնտի կոմիսարը չեր նայում իր ստորագրո-  
յալին, սակայն նրա խոսքերի մեջ լսվում եր՝ իր  
ձայնի նման մի մեղմ հանդիմանություն: Յեկ Զել-  
նոկովն զգաց վոր կարմրում ե դլսից մինչև վոտք  
անդիմագրելի վառող ամոթից: Նա զգաց ինչպես իր  
գեմքից ու պարանոցից հետո վառվեց մեջքը, ինչպես  
ջղային հոշոտող մի քոս թափանցում եր իր մարմինը:

Նա կանգնած եր ֆրոնտի կոմիսարի առաջ մուայլ  
խոնարհած գլխով, հանցագործի պես, թեպետ նրա  
ամբողջ հանցանքն այն եր վոր անվերջ կոփմերից,  
քաշըցներից, սովածությունից տանջված ու հյուծ-  
ված իր մեջ ուժ չգտավ կատարելու այն, ինչ վոր  
նրան հանձարարել եր իր դասակարգը:

— Յես քեզ վոչինչ չեմ անի — շարունակեց Սորովը —  
վորովիետե մենք քեզ նման մարդիկ քիչ ունենք, իսկ  
մենք ավելի վատթարներին ենք ներում: Բայց մենք  
դրությունը պիտի փրկենք: Դու հասկանո՞ւմ ես, Զել-  
նոկով...

Ամգունյան գնդի կոմիսարը դանդաղ բարձրացրեց  
գլուխը: Նրա շվարած հայացքը հանդիպեց Սորովի  
լուրջ և վճռական հայացքին. այդ յերկուսի մեջ ել  
ծագեց մի ավելի մեծ բան քան թե պարզ փոխադարձ  
հասկացողությունը: Դա բարեկամական համակրանք  
յեր, գուցե նույնիսկ քնքություն: Սակայն դա  
միայն մի վայրկյան յերեաց: Մարդիկ քաշվում  
ելին իրենց քնքույշ ու տաք զգացմունքներից Ուս-  
սուրիի զծի անգղա, սառը ճանփաներում:

— Գնանք հրամանատարի մոտ, — ասաց Սորովը:  
Նրանց հարկավոր եր մի արագ ու ճիշտ միջոց: Բայց  
ինչ կարող ե տալ հին գնդապետի համազգեստ հա-  
գած մի մարդ, վոր սովորել եր միայն կազմակերպ-  
ված ու պազմական միավորներին: Նա տարտամ ու  
հուսահատ նայեց յերկրուսին ել սկ գրեթե սգաշըջա-  
նակով պատաժած առաջնաձնականությունով և վոչինչ չասաց:

— Յեթե այս միջոցին յես մի հինգ հատ հուսալի տղաներ ունենայի, յես ամբողջ գունդը կզահեցի — բացարեց Զելնոկովը: — Բայց այժմ արդեն ուշ է, թեկուզ հինգ տասնյակ ել ունենաս: Նա գետը կանցնի և կամրանա: Սեմենչուկը հին խորամանկ աղվեսներից է:

Նա հարցական նայեց հրամանատարին, բայց սա առաջվա պես լուռ եր: Յերբեմնի ճիշտ ու գործադրի մեքենան այժմ հրաժարվում եր աշխատելուց: Սորով ձեռն առավ մի հեռագրի թուղթ և թոցնելով հրամանատարի ձեռքից մատիտը սկսեց արագորեն գրել սեղանին կորացած:

— Սաորագրեցեք — ասաց նա, խոթելով գրոտած բլանկը: — Զելնոկով, յես հայտնում եմ հեղափոխական շտարին յեղածի մասին և խնդրում եմ ուղարկել քո տրամադրության տակ նավաստիների մի գումարտակ: Դու այս ըոսկեյիս կնատես դրեզինան և կզնաս վյազեմսկի կողմը: Այստեղ կհանդիպես ջոկատին և նրա հետ կանցնես Արգունսկ: Յես կարծում եմ վաղը գիշեր դու արդեն այնտեղ կինես: Սեմենչուկն ել տեղ չի ունենա նահանջելու: Յես քեզ տալիս եմ իրավունքներն ու լիազորությունները, վորպիսին պահանջվում է: Դեհ, գնա յեղբայր... Սպասելու ժամանակ չկա:

Նրանք միասին դուրս յեկան դեպի գիծը: Վագոնի մոտ նույն դրության մեջ կապած մնացել եր Զելնոկովի ձին: Տիուր կիսաբաց աչքերից թափվում ելին

սովի ու հոգնածության արցունքները: Զելնոկովը վաղաքշաբար շվեց նրա պարանոցը:

— Դու հոգ տար իմ ձիուս, ասաց նա Սորովին: — Յեվ հետո... — Նա մի վայրկյան կաշկանդվեց և տարորինակ ցնցվող ձայնով վերջացրեց.

— Գուցե քեզ մի կտոր հաց կունենաս... ինձ համար...

— Այժմ միայն Սորովը նկատեց, վոր Զելնոկովը ավազի նման դժգունել եր: Նրա դեմքի կաշին կը ծկվել եր, սուր կերպով ցուցադրելով այսոսկրներն ու ծնոտները: Աչքերի տակին կապույտ շրջաններ ելին գոյացել և կոպերը նկատելի կերպով դողում ելին:

Սորովը ներս վազեց վագոնը և մի բոպեյից վերադարձավ ձեռքին մի մեծ կտոր հաց ու ձարպ բոնած:

Պայուսակ ունես, վնրաեղ դնեմ: Զունես, դե վեր առ իմս:

Նա նորից վազեց վագոնը և բերավ յապոնական ձեր մի պայուսակ:

Յեվ նա իր գլխարկի կոտրված կողիրոկի տակից, խորը ընկած բորբոքված տչքերով, Զելնոկովին եր նայում՝ դեռևս չձնշված, դեռևս խորքում չթագցրած անհասկանալի վշտով:

ԿԱՄ ԵՍ ԿԱՄ ԵՆ...

I

Մոսկվայում ապրում ե Ստեղան Վասիլյիչ Ստրինինը. պաշտօնը փոքր չ' յերկաթուղապետի առընթեր առանձին հանձնարարությունների ինժիներ։ Այդպես ել զրված եր ծառայության ցուցակում։

Ընտանիքի տեր, կինը մի աղջիկ-պարոն՝ Կլավդիա Անդրեյևնա, քառասուն տարեկանին մոտ, ապրելու, վայելելու ախորժակը դեռ չկորցրած, աղջիկն ել, վարինկան մի նկարելու գեղեցկուհի, թևերը նուրբ ու կլոր, սիփ-սիպտակ — «այլ փրկյա զմեղ ի չարե»...

Այդ որերին եր ահա ծփում հեղափոխությունը Ուռուսաստանի ափերում, ալիքները բարձրանում եյին վեր ու լայն հորձանք տալով, ծավալվում եյին դենը՝ հեռուները։

Քանդվում եյին զառամած դարերի ժանդատած փականները, հոգեարքի տանջանքներում կծկվում եյին պատմության փոշոտված յերեսները, պատովում ու դուրս եյին նետվում մարդկանց կեղծավոր աղոթքներով սքողված, խրթին բառերով զարդարված սպոտերենները, իսկ նրանց տեղ բանում ու աճում եյին նոր եջեր, վորոնք յերբեմն միամիտ, սակայն իրենց

Վրա կրում ելին մի հաստատ խորագիր՝ «Բոլորին և  
ամենքի մասին»...

Իսկ Սարինինն եղ յեռ ու գեռի մեջ մնաց անշարժ,  
նույնիսկ նրա հինգ սենյականոց մեծ բնակարանը  
մնացել եր նույնը իր հարմարուն անկյուններով, թան-  
կագին գորգերով, փափկանիստ որորող ու քնաբեր  
աթոռներով և այլ մեղկացնող անդորր ու փափուկ  
իրերով:

Ստեփան Վասիլկիչը բավականին ոժտված եր  
կյանքի իմաստուն փորձով. հիսուն տարում լավ եփ-  
վել եր եղ իմաստությունն ուղեղում ու պնդացել:  
Յեվ ինչ եր դարձել եղ բոլորը, յերեք բառ՝ «սուս  
արա, համաձայնվիր, գովիր»:

Փետրվարյան հեղափոխության որերին Սարինինը  
Նիկոլայ թագավորի նկարի յերեսին կպցրեց Ռոջյան-  
կոյի նկարը, հետո վրան թիւեց կերենակունը, իսկ սրա  
վրա յել, յերբ հոկտեմբերն յեկավ, Լենինի նկարը: Ինչ  
կար վոր, վոսկյա շրջանակը բոլորին ել հավասարա-  
պես սիրով պահում եր:

Սարինինը ժողովսերին ել եր դուրս գալիս՝ խոսում  
բանվորի ողտին, մեջից կես եր լինում, ենակես վոր  
մի քանի կոմունիստներ զլուխները թափ եյին տա-  
լիս, լեզվով չխկացնում, ասելով.

— Ե՞յ քեզ բան, ադա դու մերոնցից ես յեղել...

Միայն բանվորները աչքով եյին անում.

— Ինարկե, դե մեծավորի ձայնը մուժիկից զիլ ե  
հնչում. զարմանալի յե, կյանքը մեր ուսերի վրայով

ե անցել, բայց նրա նման հո չես խոսի: Ասենք,  
խոսելն ել մեծ գործ ե, հա:

Հաշտության որերին Սարինինը հարմարվել եր  
բանվորական ձայների համերաշխ խմբին վերջնակա-  
նապես, ու սատանան գիտե թե վորտեղ եր կեղծ ու  
սխալ ձայն հանում, դժվար եր ջոկել:

Հետո յեկավ մի ժամանակ վոր թքամաններն ել  
տեղից գլխիվայր շրջվեցին, ուր մնաց թե ես մար-  
դիկը, ու դյուժական նշանով կարծես, սրանք ես-ես-  
ես-երյան առևտրականի հեզաբարո դեմքն ընդու-  
նեցին:

Հենց եղ միջոցին, ուղիղ մարտի որերին, զան-  
գահարեցին Դորպղոփսուժից Ստեպան Վասիլկիչ Սարի-  
նինին: Կես ժամի չափ թելի միջով անցնում եյին  
խոսքերը, իսկ յերբ հեռախոսի խողովակը դրվեց իր  
տեղը, Ստեպան Վասիլկիչի բեղերի տակ ժպիտն եր  
անցնում ու թոշում դեմքի կնճիռներով:

Նա կամաց շշնջում եր քթի տակ.

— Տեկս, տեկս, ինչու չե, շատ հրաշալի յե...

Յերեկոյան ասում եր կնոջը.

— Խնդրում եյին և ինչպես ել քաղաքավարի, մի  
սենյակ զիջել ճանապարհի նոր նշանակված կոմիսա-  
րին: Խնդրեմ, կլավդիա, ուշադիր յեղիր և...

— Բայց չե վոր, Ստեպան, կոմունիստները...

— Դատարկ բան ե: Ասում են ջահել ե, ամուրի...

— Իսկ Վարիան, դու մոռանո՞ւմ ես. ախար դա...

— Ալս, սիրելիս, այ թե ինչ կնշանակի կյանքին  
չհետևել: Հետո ի՞նչ — վարիան: Յեթե յենթաղը եւ  
նույնիսկ... ինչու չե...

## II

Սարք ու կարգը հասարակ չե: Յուրաքանչյուր  
փափուկ բազկաթոռ, ամեն մի ճոճվող աթոռ, կամ  
գույնդույն գորդ խոսում են լակեյին հատուկ պատ-  
րաստակամ լեզվով:

— Խնդրեմ համեցեք, Ալեքսեյ Պետրովիչ: Մի  
քաշվեք խնդրեմ. չե վոր դուրալի յե հանգստանալ,  
մանավանդ վոր դուք արժանի յեք այդ հանգստության,  
թանկագին ընկեր Պլոտիցին:

Մթնշաղին, յերբ մարզող ստվերները լիզում են  
առարկաներն ու նրանց հավասարապես անորոշ դարձ-  
նում, այդ մթությանը հիշողության մեջ կենդանա-  
նում են ու սոլում անցյալի պատկերները:

Պյատնիցկայա փողոցում որեր-կոնդուկտոր Բրյա-  
բինի բնակարանումն եր Ալյոշա Պլոտիցինը — «գոր-  
տերի թագավորը», վոր մի ժամանակ ապրում եր իր  
հոր, Պյոտր Անդրեյիչի հետ, սա ել «Պետտեր» կոչված  
չուգունա - հալոցային և մեխանիքական արհեստա-  
նոցի տոկարն եր: Ալյոշայի մոր՝ Ստեղանիդայի մա-  
սին խոսք չի կարող լինել, նա Ալյոշայի կյանքի վրա  
չի ազդել, սկզբի որերից ախ ու վախ եր անում, հարևան-  
ների հետ անցյալից եր խոսում թե ինչեր եր տարել, ինչ  
եր կորցրել, մի խոսքով կնիկը կառավարում եր տունը:

Իսկ Ալյոշկային գորտի թագավոր նրա համար եյին  
ասում, վոր իր հորից տմբուղ տառելուց հետո վողոցի  
մեջ տեղը հովի պես պատվում եր, մի վոտի վրա զար-  
կում ու կանչում եր.

— Եյ հեյ, ճըռճըռա, կըռ-կըռա, ճըռճըռա —  
հա-հա...

— Նրան ինչ դարդ, գանգատվում եր մայրը,  
պատիժ ե ծնկել ինձ համար, տեր, մեղա քեզ... թե  
իմանայի եսպես կլինի, կիսեղդեյի:

— Յես ել — բղավում եր Ալյոշկան — ետ տեսակ  
մորը բոշային կտայի...

Ախար սուտ չեն ասում պառավերը, ծեծիր  
քանի նստարանի լենքին ե, թե յերկանքով մին դա-  
ռավ, ուշ կլինի — կատաղեցնում եյին հարեանները:

Իսկ Ալյոշկան արդեն տասնըհինգ տարեկան ե, նըս-  
տարանի սաղ յերկանքով մին ե, մայրը գժիար ե  
հախից գալիս:

Հայրը կգար աշխատանքից, մայրը արցունքն աշ-  
քերին կաղաչեր.

— Մի սրան ճար արա, ես անզգամին, հոգիս  
հանեց ախըր:

— Հը, ելի...

— Ի՞նչ ելի. վոչինչ, սուտ ե ասում — կասեր  
Ալյոշկան ու աշքերը կխոժոռեր մոր կողմը:

— Սուտ ե ասհւամ — կկատաղեր Ստեղանիդան —  
այ գու մուրտառ. շշկված սատանա. հլա մի տեսէք,  
թե վոնց ե ավագակի նման աչքերը չոել: Բա են ով

Եր տերտերի մուշտակը դեղին ներկ քսել, հը՞ գու  
չեյի՞ր: Տերտերակինը ձենը գցել եր, հայ, հարայ,  
կգանգատվեմ սուղին, դպրոցի մեծի մոտ կերթամ,  
ասում ե, դպրոցից դուրս անել կտամ: Այ քեզ թե  
սուտ եմ ասում—հորը դառնալով—մի հարցըու բ,  
հարցըու դրան, ը-ը-յիյ, թոկից փախած:

— Ի՞նչ հարցնեմ, յես դրան հարցնել նշանց  
կտամ հիմա...

Մատի հաստությամբ թոկը կվերցներ ու կծեծեր  
նրանով, ծանր, կարծես գերան եր կտրում կացնով.  
ծվում եր Ալյոշկան զիլ, վոտները թափահարում, չեր  
կարող դուրս պրծնել, հայրը գլուխը պինդ առել եր  
վոտների մեջ:

Քսան հարված բաժինը տալուց հետո կշպոտեր  
բակը: Ընկնելուս Ալյոշկան մի քանի գլխկոնճի կտար,  
վեր կթուչեր, տան չորս կողմը կպտտեր ու տան դի-  
մացի արխի ափին նստած կսպանար ու հիշոց կտար:

— Կմորթեմ, աչքերս քոռանա թե չմորթեմ—  
կմեծանամ ու կմորթեմ, տերտերի պատուհաններն  
ել հիմա ջարդելու յեմ:

— Ալյոշկա—բղավում եր մայրը—այ շուն, հալա  
եդ քիչ եր համ...

— Դու ետեղ սուս կաց, ալք, քեզ ել կխեղեմ:

— Տեր, մեղա քեզ աստված, գալիս ե, գալիս ե  
հայրդ յետեկցդ, անիծվես դու:

Ալյոշկան մոտ կվագեր պատուհանին, մատը  
կմեկներ.

— Այ, կըծի, եղուց ել ծըծի. — ու պոկ՝ կփախ-  
չեր փողոցվ մեկ:

Ման եր գալիս կատաղած, թշնամիդ նրան ոաստ  
չգար, մեկին եր փնտրում վոր վրեժը հանի, ու չեր  
հանգստանա մինչև մի հաստիկ զիմնազիստի քունջը  
չկոխեր ու տուր թե կտամ.

— Առանց պաշպորտ քուչով մի ման գա, սա-  
տանի կուկլա:

Յեթե բարուրից քեզ չմփացնում են ու հասցնում,  
բայց և այնպես, պատմությունը ձանձրալի յե դառնում  
և պատմությունը հետո շրջվում ե, դառնում հակառակը:

### III

Ալյոշկան չեր կարդացել Մայն—Ռիդը, թե չե  
«Բազելի աչք» հերոսին կնմաներ և նման ել եր համ-  
բերությամբ, բնության կոփվածքով:

Մայն Ռիդը չեր կարդացել, բայց հակումն ունե-  
նալով ճանապարհորդության ու ազատության, կիր-  
սանով քաղաքից մինչև Տամբով հասավ Պույլմանի  
վագոնով վառելափայտի արկղում նստած:

Գնացքի վերահսկիչը մնացել եր զարմացած «նա-  
պաստակի» մեծությանը.

— Յեղբայր, ել չեմ անի.

— Ել ի՞նչ չես անի, են ա յեկել հասել ենք: Ու  
դիմելով ոբերին, սպասում եր նրա կարգադրության,  
թե ուր տանեն:

— Ել ուր տանես, մի հատ սիլլա տու, գնա կորչի:

Տամբովում, վորտեղ ապրում եր Ալյոշան, բնակարանի տիրուհին խրատում եր՝

— Ի՞նչ ես անգործ նստել, տղա. «պառկած քարի տակին ջուր չի հոսի»: Զի լինի, մի գնաս մուրճով սալին տաս — մի կտոր հաց աշխատես: Զանով տղայես, ջանել ես: Այ, յեղբայրս զա, հետը խոսեմ, նա դարբնոցում ե բանում, ով իմանա, գուցե կասրքի... Պլոտիցինն ուրախ ե.

— Այ, շնորհակալ եմ քեզանից Մատրիոնա Սերգեյինա, քեզ յերախտապարտ կլինեմ:

— Դեհ, չե մի ինչ...

Հինգ վեց որ անցավ, Ալյոշկան արդեն հնոցի մոտ կանգնած աշխատում եր: Մատրյոնա Սերգեյինայի դարբին յեղբայրը սարքել եր նրան իբրև մուրճ խփող՝ յերկաթուղու արհեստանոցում:

Հարվածում ե Պլոտիցինը մուրճով շիկացած յերկաթին, ինչքան ջանումը ջան կա, իսկ Սերգեյիչը փոքր մուրճով մանր հարվածներ տալով խրատում եր՝

— Դու սամթով արա, դագանակ չի, վոր հասցնում ես, սարսաղ, շատ ես զոտ անում նհախ տեղը: Մի տես, վոնց են անում, այ:

Կկանչեր մյուս քուրայից դարբիններից մեկին.

— Արա, մի խիմ. Այ, տեսան, դե սովորի տղաս:

Ալյոշկան ընտելանում եր, Մի ամիս անց Սերգեյիչը գովում եր՝

— Տես ե, դոչաղ, ուստա յես դարձել:

Յերբ եր ես բոլորը, բոլորը. վորտեղ:

Պատի մյուս կողմը մեղմ ու թախծոտ ձայնով դաշնամուրի տիրուր նվազակցությամբ յերգում եր Վարիան.

Ваши пальцы пахнут ладаном  
И в ресницах спит печаль.\*

Թեթև թխկոց՝

Ալքսեյ Պետրովիչ, յես չեմ անհանդստացնում ձեզ:

— Աս, վոչ, խնդրեմ, Վարվանովնա, յես սիրում եմ յերաժշտությունը:

Ցե անա, անապատելի թախիծ ու կարոտ... Հետո վորշեց թե վորտեղից ե դա. կնոջ մարմին եր ցանկանած, այստեղ, մոտ եր նա և զրգում եր: Ինչքան հատուկ մի տանջալից ձգտում եր դա:

Ցանկությունը վառում եր նրան, ձեռքերը վորոնում եյն և առաջ մեկնվում, ցանկանալով կոտրել պինդ ու ձկուն մարմինը, իրեն հպատակեցնել, խեղդել, հյուսել իրեն հետ, կլանել իր մեջ այդ մարմինը:

## V

Պլոտիցինը անցել եր կյանքը. նա ծեծվել ու տրորվել եր այդ կյանքում և պատահել եր վոր ուզում

\* Զեր մատները խունկ են բուրում

Թալրթիչներին թախիծ նիրհում:

Եր իրվել լուռ հողի կուրծքը, նայել նրա մութ յերախի մեջ ու վոռնալ գայլի վոռնոցով, սակայն ատելությունը, վոր փոթոթում եր ու գալարում նրա ներսը, ստիպում եր նրան զգաստ ու զգույշ լինել և մի ժամանակ, հեռու սիբիրյան դաշտերում չեխ զորամասերը պարտիզանական խմբով հետապնդելիս ու նրանց ճանապարհին գնացքները պայթեցնելիս եր, վոր նա բարձր ծիծաղում եր լցված ատելությամբ թշնամու յերեսին՝ գնդացիքների կրակի այրող հոհուցով։

Յեկ այժմ, ահա այդ ատելությունը ճմլվել եր ու թուլացել։

Վազվոռմ եր Պլոտիցինը ժողովներին ու նիստերին և ազատ յերեկո չուներ նա, Բայց անցավ յերկու յերեք ամիս և կարծես աննկատելի կերպով բոլորը փոխվեց։

Ուզում եր հավատալ վոր Սարինինը իսկապես մեր մարդն ե և նրա ընտանիքն ել սիրելի ու լավ մարդիկ են, սակայն ինչ պահանջել նրանցից, յերբ նրանք... և այլն։

Հետո հետզետե մոտեցավ Վարիան, մի այլ զգացմունք ու ապրում շարժվեց ու դուրս սողաց և ել վազելու և շտապելու ցանկություն չկար։

Յերեկոյան Պլոտիցինը նատում եր մի վորեւ անկյունում թերթը ձեռին, բայց չեր կարդում, այլ ամբողջ ժամանակ հետեւում եր, թե ինչպես Վարիայի փոքրիկ թմբիլիկ մատները վազում ելին դաշնամուրի ստեղներով։

Ուշադրությամբ ականջ եր դնում թանձը ու խոր հնչյուններին, հանդարավող գիտակցությունը թմրում եր յերանելի հեշտանքի ծալքերում։

## VI

Ինչեր են անցել ես տասնընինդ տարում։  
Դեմքերը ժամանակից գունատվել են ու հիշողության մեջ զորշ ու անտեսանելի բծեր են դարձել...  
Պատմում ե Վարիային իր կյանքը։

Լուսմ եր Վարիան ուշադիր, յերեխայի նման կիսաբաց բերանով, նրան գրավում եր այդ նոր աշխարհը։  
Այդ աշխարհի միջով անցնում եր Պլոտիցինը համառ ու հաստատակամ, նրա ձեռքերը պարաններից պինդ հյուսված, մազերով ծածկվել ելին մինչև դաստակը, կուրծքը լայն, կարելի յեր ծածկվել ու խորասուզվել այնտեղ, մանկական անդրության հատուկ քաղցրություն զգալով։

Ուզմիկը ստանում ելին թե չե, գնում ելին խմելու, գնում ելին նավթից ու ածուխից յուղոտված ու մրոտված խմբով, գրպաններում մանեթանոցները զրնգացնելով, հետո խմում ողին թեյի բաժակներով մինչև վոր լավ թրջվելին ու իրարու գիրկը կնկնելին։

Սերգեյիչը խփում եր ձեռքը սեղանին ու բղավում։  
— Ալյո — ոշա, քեզ մատաղ, մի յերգ ասա, հալորիս մխիթարի, ուրախացըրու, դե հապա...»

Ի՞նչ պետք եր յերգել, ի հարկե հոգին փոթոթող յերգերից։

Ու են ժամին ներս եյին մտնում կանայք, առանց  
անունների, այլ մականուններով...

Յերգիր, սիրելիս... Ո՞վ... յերգիր... Յեվ ես բոլորը  
տեսեց մինչեւ այն որը, յերբ Պլոտիգինը շոշափեց մի  
ուրիշ զգացմունք:

Ծանոթացավ նա ուսանողների հետ, իսկ մի յեր-  
կու ամսից հետո բնակարանի տիրուհին, Մատրյոնա  
Սերգեյեվնան աչքերը չուելով հարցնում եր՝

— Հը, մեր տղա, հո չես ամուսնում:

— Եղ վիրտեղից Սերգեյեվնա:

— Տեսնում եմ Ելի, մտքումդ բան կա, ինձ չես խարի:

Յեվ յերբ Ալեքսեյի մոտ ծանոթ կուրսիստկաններ  
եյին գալիս, անպայման գովում եր Պլոտիգինին, սե-  
ղանին ցցվելով պառավի հանգի:

— Ել ի՞նչ ասեմ, քյահրուբարի նման տղա, լավ  
աշխատող, նրա հետ ուր վոր մարդ գնա, չի կորչի,  
սիրելում ել ենալես ե վճր...

Նրանց գնալուց հետո, կհարցներ.

— Հը, վիրն ե քո սիրածը. Են սև աչքունքովը  
դանդուր մազերով, հրեյունու նման, թե են շիկահերը:

— Յերկուսն ել, Սերգեյեվնա:

— Եյ, գու, մի ծիծաղիր, մի, անդլընդ:

Յերբեմն ել Ալեքսեյը կկորչեր, յերկու որ իրար  
վրա տուն չեր գա:

Են ժամանակ պառավը անհանգստանում եր, Պլո-  
տիգինին սովորել եր ու Սերգեյիշին հարց ու փորձ  
եր անում, հո չի տեսել արդյոք նրան:

— Զե, ես որերին նա գործի ել չի յեկել:

— Դե, ուրեմն նրանց մոտ կլինի, տեսնում ես,  
ինչպես են նրան պահում:

Պառավը խիստ զարմացավ, ապշեց, յերբ Սերգե-  
յիջը նրան խորհրդավոր կերպով հայտնեց.

— Դե, քույրիկ, սրտապնդվիր, մեր Ալյոշի բանը  
բուրդ ե, հինգ տարով նստացրել են:

## VII

Կյանքն առաջ թռավ.

Որերը ձանձրալի չեյին, խոսակցության համար պետ-  
քական խոսքեր ճարպում եյին, իսկ պաշտոնական թըղ-  
թերի տողերի միջից գարնան շրջպարն եր նկարվում:

Զեկուցումները չեյին ջղայնացնում Պլոտիգինին:  
Կլսեր և այնպես քաղաքավարի անհրաժեշտ ցուց-  
մունքներ կտար:

Գալիս եր Դորպրոֆսոնի նախագահ Յեգորովը,  
վականագործային բաժնի արհեստավոր վարպետնե-  
րից, խրոխտ բամբ ձայնով, խոսակցության միջոցին  
պինդ հիշոցի մեծ վարպետ եր, վորի յերեսից գրա-  
սենյակային աշխատանքը գեռ չեր ջնջել ծխացած  
կաշվի գույնը և սուր աչքերի ամրությունը:

Ենստեր Յեգորովը դիմացի բաղկաթույին, ծնկները  
լայն բաց կաներ՝ ծանր հենվելով ձեռքերով և նայե-  
լով ուղիղ Ալյոշինի ճակատին, կհարցներ.

— Ի՞նչ անենք, գծի ստուգումը, կոմիսար, կազ-  
մենք թե չե:

Պլոտիցինը կարդում եր, ականջ դնելով պլրեղ-  
դորպիտի խոսքերի չուփունի զլզոցին:

— Ինչու չե, ընկեր Յեգորով, կազմենք, բանն  
ինչո՞ւմն ե: Պայմանավորվեք Սարինինի հետ: Ի դեպ,  
դուք չեք առարկում նրան յերթևեկության բաժնի  
պետ նշանակելու դեմ:

— Ի՞նչ կա վոր, վոչ, չենք արարկում, գործ շի-  
նող մարդ ե, հըմ... հին ինժիներ ե, — համաձայնվում  
եր Յեգորովը, իսկ առանձնասենյակից դուրս գալիս  
մտածում եր. «Աղջիկն ել ջահել ե, ախար»: Ե՞ն, սա-  
տանան ձեզ հետ, բարձրից ինքներդ ավելի լավ  
կտեսնեք»:

Գալիս ե Յեգորովն իր բաժանմունքը և ծիծաղում  
իր քարտուղարի հետ.

— Կպել ե մեր կոմիսարի սիրալ. Սարինինը մի  
խանում աղջիկ ունի, մոտ ե քաշում:

Քարտուղարն ել իր հին վարպետական սովորու-  
թյամբ բեղերը վեր եր քաշում ու սեպին խփում.

— Դե ել ի՞նչ. բանը պարզ ե՝ գարուն ե, և վոնց  
վոր ասում են՝ տաշեղն ել ե տաշեղին կպչում: Մեր  
կոմիսարը վոր կա, ականջամտուկ ե...

Պլոտիցինի առանձնասենյակով առաջվա նման  
ժամի 1-ից հետո անցնում ելին քարտուղարուհիները,  
մեքենագրուհիները թխպակալած և գարնան շորշովով  
ազդված փոքր ինչ խորամանկ աչքերով:

Թեթև շորերի կտրվածքները նկատելիորեն մեծա-  
նում ելին, բացվածքները գնում ելին ուր վոր հնա-

րին եր և ցուցահանված բացաշկարա ու չքաշվող  
կուսական անմեղությունը կանչում եր.

«Յես, յես: Առեք ինձ»:

Ուշադիր հայացքը նկատելով իրենց վրա, շտապ  
ուղղվում ելին, ձևացնելով թե ցանկանում են ծած-  
կել զգեստի խոր կտրվածքը և շարժելով մերկ  
ուսերին իջած նեղ ժապավենը, կարծես ասելիս լի-  
նելին՝ «Դուք տեսնո՞ւմ եք, վայր ե իջնում, ի՞նչ  
անենք հիմա»:

Պլոտիցինը չեր կանգ առնում, շտապ գրոտում  
եր հարկավոր մակագրությունները, համապատասխան  
կարգադրություններն եր անում և ել յերկար նստած  
չեր մնում. ժամի հինգին մոտ պորտֆելն եր ճշտում  
թղթերը, զանգահարում եր Սարինինին ու գնում:

Մի ինչ վոր բան կար, վոր ատիպում եր շտապել,  
և այդ «ինչ վոր բանը» որ որին աճում եր, խլացը-  
նելով մնացյալը, և թեթև «վարդագույն խելացնորու-  
թյամբ» թուխպի պես պառկում եր Պլոտիցինի սրտին:

Մայիսը վառ կանաչով ծածկել եր ծառերը:

Վարդիան աննկատելի կերպով մոտ եր դառնում  
նրան:

## VI

Իր առանձնասենյակում նստած և սովորականի  
նման ընդունելով զեկուցումներն ու հաղորդագրու-  
թյունները, առանց պատճառի հուզվում եր ու գո-  
ռում:

— Ընկեր, դա գործ չի — դուք չեք ուղում աշխատել. ձեզ ասված եր չե՞ս, Պետք եր գործադրել և ներկայացնել իր ժամանակին վճարման տեղեկագրերը:

Իսկ ընկերը, այս գեղքում մի փոքրովի կանցել յարիստ, աչքերը անմիտ թարթում եր և զգալով իր անխուսափելի կորուստը, անտեղի խոթում եր մեկ կամ մյուս թռւղթը, վոսկուցած լեզվով կուրատելով.

— Զգիտելինք, Ալեքսեյ Պետրովիչ, աղնիվ խոսք:  
Պլոտիգինը ավելի կզուար.

— Գիտելինք, չեյիք կարող չխմանալ. կանչեք հաշվապահին...

Ֆին-բաժնի բուղալտերը սպեց եր, իր գինն իմանում եր, շուտով պարզեց, հանգիստ ու գործուրեն, վոր անհրաժեշտ կարգադրությունը «բանդ» եյել իրեն Պլոտիգինի կողմից:

Ժամը չորսից հետո յերբ բոլորը գնում եյին ծառայությունից, Պլոտիգինը յերկար քայլում եր առանձնասենյակում և մի ըովե հանգստանալով, զլիի եր ընկնում, վոր վոչ վոք այստեղ մեղք չունի և ըսկի վճարման ցուցակների մեջ չի բանը; մի այլ բան կար, վոր մտել եր նրա ամբողջ եյության մեջ և խառնուփիթորել միտքը:

Զգում եր Պլոտիգինը, վոր առաջվանման աշխատել այլ ևս չի կարող:

Շրջապատված լինելով Սարիսինների խնամքով հետպհետե ձեռք եր բերել կուշտ աղայի սովորությունը:

Ներն ու ճաշակը: Լինում եյին արհամարական և քամահբական վերաբերմունքի գեղքեր գեպի իր ստորագրյալները, բոնում եր իրեն այդ բանում և ուղղամիտ ու շիտակ լինելով բնավորությամբ, չարացած հայնոյում եր.

— Զհաննամը, իհարկե պետք ե հեռանալ, յեթէ վոչ...

## IX

Պորպոֆսոնի նախագահ Յեգորովը պայմանավորվելով Սարինինի հետ, կազմեց վերջապես գծի ստուգման շրջագայությունը:

Պլոտիգինն ուրախացել եր վոր հնարավորություն գտավ վերջապես ամեն բանից հեռանալու:

Հատուկ գնացքը հինգ վագոնից, վեցերորդ՝ ճաշարան վագոնով ափսեների ուրախ զրնգոցով շտապում եր մի շաբաթվա մշակված մարշրուտով թռչել անցնել բոլոր կամուրջները, կայարանները, վագոնի արհեստանոցները և գեղոնները:

Առաջին անգամն եր պատահում վոր Պլոտիգինը ամբողջ «շքախմբով», բաժանմունքների և մասերի վարիչներով հանդերձ ուղեվորվում եր շրջանը, տեսնում եր զարձյալ նույն շողոքորթությունը, վորի մասին լսել եր, նկատում եր նույն ստորանալու և լաքեյանալու չափ սիրաշահությունը:

Անախորժ եր լինում ընդունել կայարանի վարչության բանավոր գեկույցները, վորովհետեւ դրանք հաքեյանալու չափ սիրաշահությունը:

անվում ելին տեղական պահասություններն ու բաց կողմերը ծածկելու նպատակով։ Ամեն ինչ կատարվում եր ի ցույց մարդկանց և նույն իսկ կայարանների մուտքերին թափած գեղին թարմ ավազը չեր կարողանում թագցնել ամեն կողմից զարնվող թափթփածությունն ու անփութությունը։

Ստորին ծառայողները յետ ելին հրվում պետերի կողմից, ինչ վոր թղթեր ելին մատուցվում, վորոնք չհասնելով մինչև Պուտիցինը, թաղվում ելին սվիտայի թղթապահների մեջ։

Յայլում եր Պուտիցինը և զգում եր թե ինչպես իր յետեկց մի յերեք տասնյակ հոգի յեն գալիս աշխատելով վոտքի ծայրերով քայլել և ամեն անգամ նրանց դիմելիս՝ զինվորականի պես ձգվում ելին հատուկ առանձին շուշով։

Յեկ այդ դեպքում միշտ միևնույն բառը՝ «լսում էմ» — արտասանում ելին մի առանձին տեսակ, այդ բուռից չինովնիկական մեշտանության հոտ եր գալիս, չոր ստիպում եր հայնոյել, բայց քարտուղարը մոտը ինչ վոր բան եր գրում, ինչ վոր բանի մասին ճականները խելացի կնճռուած խոսակցում ելին ինժիներները և Պուտիցինին ասելու բան չեր մնում նրանց։

Գնում եր իր վագոնը և այստեղ, միջնապատի այն կողմը առանձին կուպեյում մինչ ուշ գիշեր լըստիում եր գրամեքենայի հատ-հատ չմկչմկոցը և քարտուղարի թելադրող, գլուխ տանող խոսքերը։

«Ի կատարումն են-կա-պե-ես-ի համար հարյուր յերեսուն յերկու հայտարար՝ զրո քառասուն և ութ հրամանի, առաջարկվում ե ձեզ»...

Պուտիցինը թքում եր ու գնում վագոն — ճաշաւան, վորպեսզի մի տեղով գնացած լինի։

Հինգ որ ու զիշեր չարաչար գնում գալիս եր գնացքը այն գծով, բարեհաջող տեղերում ժամը յութանսուն վերստ կտրելով կտրելով։

Վերադարձին՝ Մուկվայի ճանապարհին գնացքը կանգ առավ յերկաթուղագծի գլխավոր արհեստանոցների առաջ։

Առավոտյան գոչում ելին շչակները. Պուտիցինը վեր թռավ, ու խոր ու լուռ ականջ եր գնում շչակների վունցին, և աննպասելի կերպով զարթեց ու սրտին դիպավ կարոսի զգացմունք դեպի ինչ վոր մի բանի, վոր մնացել եր յետ, բայց վորը սակայն դեռ շարունակում եր ապրել նրա մեջ և ընկերական վողջույնով կանչել։

Շչակներն անվերջ կանչում ելին՝

— Ըմմ-մմի-ի-ի-ու-ու-ու-ու-:

Յեկ ավելի լայն եր ձեղքվում յերկինքն այն տեղում, վորտեղից դուրս եր գալիս արել։

Բոլոր վերջին ապրումները չքացան, հոգին թեթևացավ և մի դուրեկան ջերմություն մտավ կուրծքը։

Անցավ մաքովը՝ խորը չաղղելով՝ Վարիան։

Ամբողջ ճանապարհին նրան այնքան ել չեր հիշում։

Նախկին դարբնի սըտում վոչինչ չեր մնացել,  
բացի տարակուսանքից...

Մտածում եր. եղ մարզը կար, չմտավ իր հոգու  
մեջ և նա այնպես հեռու յեր և ոտար:

Ոտար,— այդ գիտակցությունն եր վոր միշտ ապ-  
րում եր ու կար, յերկի դրանից եր վոր բավարա-  
րություն չեր զգում նա:

Պլոտիցինը հանկարծ սթափվեց, շտապեց, զգա-  
լով այն, ինչ վոր հինգ տարի սրանից առաջ, յերք  
հագնելով քրտնատար ու ածխափոշուա բաճկոնը, քայ-  
լում եր գեղի արհեստանոցը, գնալիս ուտելով, շտա-  
պելով հասնել զործի սկզբին:

Բաղիսեց հարևան կուպեն, զարթեցրեց քարտու-  
ղարին:

— Ասացէք յես պատրաստ եմ, թող հավաքվեն:  
Կես ժամ անցած, շտապ մի բաժակ թեյ կուլտալուց  
հետո գնում եյին հորանջելով պետերը, մեծ մասսամբ  
ինժիներները պաշտոնական հազուստներով,  
առաջվա պես հղկված, սառը և խիստ արտահայտու-  
թյունը դեմքերին:

Գնում ու գազագած մրթմրթում եյին իրարու-

— Ուվեհ, ի՞նչ շտապ բան կար:

— Սատանան գիտի, ես կես գիշերին...

— Դե, ախար, «նաչալստվոն» ե, չե...

— Հապա միտեսեք թե ինչպես ե Սարինինը սողում,

— Հասկանալի յե, իրեն բարեկամ ե շինելու:

Իսկ Պլոտիցինն իր հաստատ ու լայն քայլվածքով

գնում եր գեղի արհեստանոցները: Մնացյալները իրար  
յետեկց շարված շտապում եյին հասնել նրան:

Պլոտիցինը սուզվեց մեքենայական մասի կիսա-  
բաց դռների մեջ:

Վերը առաստաղի տակին սուլելով ու շշալով վա-  
զում եյին կաշվե փոկերը, շրջեցնելով անիմսերը, այդ  
փոխադրիչ անիմսերի ու փոկերի շառաչյունների ու աղ-  
մուկի միջից Պլոտիցինի ականջին եր հասնում վոգեռող  
շարժման ծանոթ յերգը, ստանոկների կտրիչները  
պտտվելով, խըսիըռացնում եյին ու դուրս նետում  
մետաղյա տաքացած մանրունքներ ու ժապավեններ:

Անցնելով բաժանմունքներով Պլոտիցինը տեսնում  
եր իրեն ծանոթ և հարազատ գեմքերը:

Կանգնում եր ստանոկների առաջ, յերկար նա-  
յում եր անթարթ և ավելի ու ավելի խորն եր վերա-  
պրում անցյալը:

Անցան դարբնոցի առանձին հակա շենքը, հան-  
կարծ խլացը զարկերն ու զնդոցը. ինչ վոր անկյու-  
նում կատաղի վոռնում եր ողամաքըրիչը:

Յերկու հարյուրի չափ քուրա, պատի յերկարու-  
թյամբ շարված ծուխ ու կրակ եյին ժայթքում գեղի  
վեր: Արհեստանոցի մեջ տեղը ծանր մարմինը ցնցե-  
լով յերէք շոգեշարժ մուրճեր հերթով զրմփում եյին,  
նրանց յետեկը, շենքի խորքում հրավառ յերախը  
բացած վոռնչացնում եր հալոցարանը:

Զորս կողմը մի տեղից մյուս տեղ եյին վաղում  
բանվորների սկ կերպարանքները:

Այս ամբողջ շարժման, զրնգոցի և դպրոցի մեջ ապրում եր ամենահաղթական կորովի փոքրորող ուժը: Պլոտիցինը դպաց քարածխի ծանոթ ծխի հոռար, ինչ վոր մի բան ջանովն, անցավ խփեց գլուխը և շունչը բռնելով, կոկորդին հասավ:

Յեկ նա համբերեց, ընդհուպ մոտեցալ սալին, առավ մուրճահարի ձեռից ծանը պողպատե մեծ մուրճը, թեթև ու հեշտ բարձրացրեց այն, պատացրեց ձեռքերում, նետեց վերարկուն, առաջ դրավ ձախ վոտքը և պատրաստվեց:

Բարձրահասակ մկանաշատ դարբինը սիրավիր վող ջունելով ժպտաց, դուրս հանեց քուրայից շիկացած յերկաթի մի կտոր և հրավիրելով նշան արավ զարկելու, ինքն ընկերակացելով մերկ սալին էարճ հարվածների խաղով:

Պլոտիցինի մկանները խաղացին, բացվեցին և մեծ մուրճը լայն շրջաններ գծելով, փորձված մուրճահարի ուժով վայր իջավ, ծեփելով ու ամեն մի հարվածով, յերկաթը քառորդ դյույմով տափակացնելով:

Կողքին կիսաշրջանաձև շարպել եր սվիտան, դեմքերին թագնված քմծիծաղն եր վագում:

Պլոտիցինը զարկերը վերջացնելով, նկատեց այդ ժպտաները, վերարկուն վրան ձգեց և հուզմունքը զսպելով, խորը շունչ առնելով, դարձավ դեպի մուտքը:

Մյուս կողքից, պաշտօնական մունղիրների միջով անցնելով, առաջ յեկավ մի դարբինի հսկայական մարմին և Պլոտիցինը լսեց նրա ընդհատվող և խոպոտ ձայնը.

— Սի... Ալյոշա. ընկեր կոմիսար:

Յետ նայեց. դարձյալ նույն մեծ, սակայն ժամանակից ծերացած ու սպիտակած միրուքը, մըրի շերտերով, նույն լայն բացած սուր աչքերն ելին...

— Սերգեյիչ, դու յես:

Շքախումբը տեսավ ինչպես Պլոտիցինի դեմքը ցնցվեց և ծածկվեց բանվորի լայն միրուքի տակ:

Մի բոպեյից հետո Պլոտիցինը իր ուղեկիցներին կարճ հայտարարեց.

— Խնդրեմ, շարունակեցեք առանց ինձ:

— Գնանք, Սերգեյիչ:

Վագոնի մեջ հասունանում եր ու ձևակերպվում վորոշումը:

Ծերունի Սերգեյիչը շուրջն եր նայում շարունակ ու շոշափում եր շրջապատող իրերը, իսկ Պլոտիցինը պատի տակը քայլելով գորգի ուղիով, հարցուփորձ եր անում:

— Եղ, դու ինչպես ես ընկել եստեղ, Սերգեյիչ.

— Ե՞ս, Պերմ եյի զնում, Ալյոշա, իմ առաջիկ տեղը, Մոսկվայի մոտ մնացի, ասացի, արի եստեղ մնամ, ճանապարհի ծախքս դգեմ, մեկել հանկարծ քեզ պատահեցի: Ու քեզ վոր տեսա կողքից, սիրոս վկայեց, տեսնում եմ, հարվածը ծանոթ ե, ավելի մոտեցա, ասի սա Ալեքսեյն ե, վոր կա: Եղակս ել դուրս եկավ ելի:

— Պերմ եյիր գննում... մոմուաց Պլոտիցինը. յերեւ լավ ե Պերմում համ, Սերգեյիչ:

— Հապա վաս Ե՞ւ. Ալյոշա, հոգիս, ամեն տեղ, ուր  
էոր գնամ, իմ ընտանիքն ե, այ հիմա դու և բոլորը  
մնացածները, վոր բանվորներ են, մերոնք չեն:

— Մերոնք են, մերոնք են:

Ալեքսեյը պահ մի կանգ ե առնում, անսպասելի  
կերպով զարկում ե Սերգեյիչի ուսին, նայում ե նրա  
ուղիղ աչքերին և թախծու ու կարծես վողորմալից  
ձայնով ասում ե՝

— Սերգեյիչ, տար ինձ, յեղբայր, քեզ հետ մե-  
րոնց մոտ...

— Վա... ինչ ես ասում, հապա եստեղ ինչ  
կմի — և Սերգեյիչը զարմացած կանգ առավ:

Շատ սուր կերպով զգաց Պոտիցինը՝ անցյալին  
վերադառնալու պահանջը, վորը բացատրել յերկար  
ու բարակ և ենպես՝ վոր Սերգեյիչը հասկանար, չեր  
կարողանում: Շատ պետք եր խոսել դրա մասին:

Զեռքով շարժեց ու յետ նայելով ասաց,

— Զահլաս գնաց, Սերգեյիչ:

— Դու սխալ ես, Ալյոշ, ինձ լսիր. մատաղ, հա-  
լեռիս, սխալ ես մտածել, նորից խոսեց Սերգեյիչը —  
հապա քեզ ինչ կասեն,

Պոտիցինը շվարեց, նրան թվաց թե ծերուկը  
նրանից խորշում ե, դադարել ե իրեն առաջվա մուր-  
ճահար Ալեքսեյի տեղ գնելուց, սրտին կպավ և շփոթ-  
վելով սկսեց համոզել Սերգեյիչին:

— Պետք ե հեռանամ, Գիտեմ վոր դու ճիշտ ես  
ասում, միայն զիտես, այ եստեղս ե հասել, իսեղում

ե, վաթաթվել ե ինձ ու խեղդում ե: Դու չե՞ վոր  
ինքդ ես ասում — մերոնց մոտ ե հարկավոր գնալ,  
Սերգեյիչ, մերսնց: Թե վոր ենպես չեղավ, յես կվե-  
րադառնամ եստեղ: Դու միտքս մի փոխել տա, վերջը  
ելի մուրձ խփող եմ դասնալու ու վերադառնալու յեմ  
ու մուրձին եմ կանգնելու, ել ուրիշ բան չգիտեմ:

— Եղանես, յերկարացը Սերգեյիչը: Եղ, ասել  
ե, ուզում ես նորոգվեմ: Նու շտոժ, լավ, միայն ան-  
պատճառ յեկ եստեղ, արդեն քո տեղն ե, որենքով,  
այ թե ինչ:

## X

Շրջագայության դադարների ամբողջ ժամանակ  
և Մոսկվա գալիս, Պոտիցինը վագոնից դուրս չգալով,  
գրում եր, չնշուալում ու ելի նորից սկսում եր գրել:

Վերջին նամակը հասցեագրկած եր դորպլոֆսոֆի  
նախագահ ընկեր Յեկորովին:

«Խնդրում եմ, ընկեր Յեկորով, ընկերական ոգնու-  
թյուն անեք. անձամբ հանձնել սույն ծրաբը՝ կենարո-  
նական կոմիտե: Յես անցնում եմ արտադրության: Հե-  
ռանում եմ ինքս, սեփական անձնական ցանկությամբ:

«Վախենում եմ, վոր այսպիսով յես խախտած լի-  
նեմ մեր կուսակցական դիսցիպլինատ, պատրաստ եմ  
պատիժը կրելու, բայց և այնպես առաջվա աշխա-  
տանքի մեջ մնալ չեմ կարող:

«Յեթե դու մաքովդ անց ես կացնում թե, զուցե  
նրանից ե, վորի մասին սկսել են խոսել, դա ճիշտ

չե, այնտեղ ամեն ինչ դադարկ է և յես պարզապես  
զգվել եմ:

«Ուրիշ յելք չկա, պետք ե գործարան գնալ թար-  
մանալ, այլապես յես կկակղեմ և կդառնամ մի հա-  
սարակ քաղքենի:

«Չգում եմ թե ինչպես եմ հոգնել, պետք ե ամ-  
րապնդվել, վորպեսզի հետո գամ և մինչև վերջը դի-  
մանամ:

«Դարձյալ շատ բան պետք եր ասել, սակայն դու  
ինձ կհասկանաս և վորեւ հարցերի դեպքում ինքո  
բացարիր, խնդրեմ: Զե՞ վոր ինքո ել բանվոր ես և  
քեզ հասկանալի պետք ե լինի իմ հեռանալը:

«Ինչ, կարծես բոլորն ասեցի:

«Պինդ սեղմում եմ ձեռքդ»

Ա. Պոսիցին».

Յերեկոյան Յարոսլավսկի կայարանից մեկնում  
եր փոստատարը, Վագոնի բաց պատուհանից սպի-  
տակամիրուք ծերունին մեկնում եր թեյամանն ու  
կանչում:

— Հաղթական Ալյոշա, թեյը զցի, ճանփին խմենք:  
Հինգ ըսպեյից հետո պլատֆորմի ծածկի տակ հնչեց  
ոբերի զիւ սուլիչը, շոգեկառքը փնչաց, վշշաց և շարժ-  
վեց առաջ:

Անցան լապտերները, ուղեսլաքներն ու կայարանի  
շենքերը:

Ալեքսեյ Պոտիգինը ամբողջ կուրծքը զուրս ցցեց  
պատուհանից: Վերջին անգամ քաղաքի շրջակաները

թողնելով իր հետեւ, սուլեց շշակը և շոգեկառքը  
առաջ նետվելով սուզվեց զծի խորը ակուների մեջ:

Վագոնների անիվները պարզ ասում եյն յեր-  
կաթին դիպչելով — կամ ես կամ են... կամ ես կամ  
են... կամ ես կամ են...

ԱՄԵՆԻՑ ԱՌԱՋ — ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ  
ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

I

Յերկարավուն, նեղ տուփի նման սպիտակ սեն-  
յակը լուռ ե ու դատարկ, Ամեն ինչ սպիտակ ե այդ-  
տեղ — պատերը, առաստաղը, նստարանները, միայն  
կարմիր ե՝ մահուզով ծածկված սեղանը։ Սենյակի  
վերին ծայրում կարմիր սեղանը դրված ե քիչ բարձր,  
շուրջը մի քանի աթոռներ — անշարժ պահակների  
նման։ Սեղանն ել նույնպես միայնակ, անշարժ մնա-  
ցել եր, վերել՝ չորս ելեքտրական ճրագ լուսավո-  
րում են կարմիր մահուզը ցուրտ և պարզ լույսով։  
Լայն լուսամուտների յերկար շարքը ձգված ե  
նեղ պատովը մեկ, վոնց վոր զինվորները՝ զորահան-  
դեսին։ Լայն պատուհանների միջից համառորեն սպի-  
տակ սենյակներն ե սոզում գեկտեմբերյան սեմութ  
յերեկոն։ Սակայն ներսը պայծառ ե, սենյակի մեջ-  
տեղը, նստարանների սպիտակ շարքերի վերը — և  
չորս լույս և վառվում։ Պայծառ լույսը սպիտակ մա-  
կարդակների վրա բեկբեկվելով ավելի պայծառ ե  
թվում, իսկ սենյակը՝ ել ավելի դատարկ։ Ժամա-  
նակն ետեղ կարծես սառել, կանգ ե առել, մանա-  
վանդ վոր ժամացույց ել չկա։ Միայն հեռու, հարակ'ա-

յրն կողմը, կարմիր սեղանի դիմաց, պատի վրա անորոշ բժովի ինչ վոր բան ե փայլում: Մեկի նկարն ե... ով պետք ե լինի... Լենինը, Մարքսը, Ստալինը, Կալինինը... Անդրադարձող լույսը թույլ չի տալիս դիմագծերը ջոկելու: Քիչ վոր մոտենաս՝ կճանաչես — ենպելսն ե:

Լուռ ե սենյակը, կանգ ե առել ժամանակը: Ծերուկ պահապանը, վոր դուն մոտ դանդաղորեն հասակն ե ավելում, — ինքն ել հենց քարացած անցյալն ե կարծես, ենպես նա ինքնամփոփ ե, մտադրադ, դանդաղկոտ, հանգիստ:

— Ե՛ ընկեր, դուք պահապանն եք:

Ընկերը սկի պահապանի նման չեր կարծես, այլ՝ չին Տարին ե՝ յերկար ու սպիտակ միրուքով, ավելը ձեռին: Նա խուլ չե, լսեց հարցը, Բայց աչքերը չբարձրացրեց գորշ հատակից:

Հարցնողն ավելի մոտեցավ.

— Ասացեք, եսոր եստեղ ժողով կա:

— Պահա — պա — անին եք հա — ար — ցնում:

— Այո, դուք եք... Զգիտես — եստեղ պիտի լինի ժողովը:

— Պա — հա — պանը յես եմ:

— Ժողովը եստեղ պետք ե լինի:

— Եստեղ...

— Իսկ յերբ:

— Հենց վոր հատակը սրբեմ, — կլինի:

Հարցնողը նայեց ավելին, հատակին, հայացքովը մեկ չափեց ծերուկին, սպա սենյակը:

— Եղակա... Ուրեմն յերբ կոկոեն հավաքվել: Զեզ մոտ կարծես միշտ ուշանում են:

— Մինչև հատակը մաքրելս — կհավաքվեն:

Յերկուսն ել լուցին: Մեկը շարունակեց ավելը, մյուսը հետաքրքրությամբ մտիկ եր անում նրան:

— Հապա, լիբր, ընկեր պահապան. վրաեղ ե եստեղի ձեր կոլեկտիվի բյուրոն:

— Բյու — բն — մն...

Նա ավելը դրեց վուների առաջ և սկսեց պատմել: Պետք եր անցնել բագի միջով մյուս բագը, հաջորդ կորպուսը...

## II

Կազմակերպիչը յեկավ կոլեկտիվի բյուրոն. Նա յերիտասարդ ե, այնպիսի գեմքով, վորով մեզ մոտ պատկերացնում են «սմիչկայի» պլակատները, ուր յերիտասարդ բանվորը յեռանդուն արտահայտիչ դիմագծերով, դուրս ցցված ծնոտով, իր ձեռքն ե մեկնում հաստամարմին, կլոր սափրված, գանգուր մազերով գյուղացուն՝ կարմիր շապկով, տրեխներով և այլն:

Միխոնովը (կազմակերպչի ազգանունն ե) հուզմունքի մեջ ե, այսոր — կոլեկտիվի բյուրոյի վերնարությունն ե: Իսկ նա — նոր ե առաջ քաշված, հազիվ յերկույթերեք ամիս ե, ինչ աշխատում ե... այսոր պետք ե հաշվետու լինի...

Շրջանը պահանջել եր անդամների թիվը ավելացնել կոլեկտիվում. շրջանը տալիս եր իր ծրագրակից առաջնորդ պահանջել եր անդամների թիվը ավելացնել կոլեկտիվում:

գիրը կոլեկտիվի ընդհանուր աշխատանքի համար։  
Պետք եր միայն յեռանդուն, բարեխիղճ և անձնվի-  
րությամբ աշխատել այդ սխեմայով — և խնդիրը լուծ-  
ված կլինի։

Աշխատանքի ընթացքում դժվարություններ, խո-  
չընդուներ շատ են յեղել, ինչպես ամեն մի բանվո-  
րական կոլեկտիվ, զործարանի կոլեկտիվում ել մի  
սափար խավ կար վոր իր սեփական կարծիքը արտա-  
հայտելուց ձեռնպահ եր մնում, Միխոնովի տեսակե-  
տով, դրանք վոչ-ակտիվներն ելին։ Պետք եր հաղթա-  
հարել այդ պաստիվությունը, բայց միշտ ել հերթի  
ելին դրված լինում ավելի կարեոր գործնական խըն-  
դիրներ, վորոնք պարզ ու վորոշ կերպով լուծվում  
ելին շրջկոմի ցուցմունքներով, կազմակերպիչների  
շրջանային խորհրդակցությունների դիրեկտիվներով,  
իսկ դրանից բացի ելի մի շարք բավականին ներքին,  
տնային գործեր։

Միխոնովը յերկուսուկես ամիս եր ինչ աշխա-  
տում եր։ Նրա աշխատանքը կարծես թե հաջող եր։  
Միխոնովը յեռանդուն կերպով «կարգափորում» եր։  
Յերբ հրատարակեցին Տրոցկու նամակներն և զա-  
նազան կողմերից կուսակցականների ականջներին  
սկսեցին հասնել ինչ վոր անորոշ լուրեր կուսակցա-  
կան տարածայնությունների, դիսկուսիայի մասին,  
Միխոնովը շարունակում եր աշխատել առաջվա նման։  
Տարածայնություններն ու դիսկուսիան դարձան  
փաստ։ Տարածայնությունների մասին խոսում ելին

զրույցներում, գործարանի ճաշարանում, բայց վոչ՝  
կոլեկտիվում ու ժողովներում։ Կոլեկտիվի պաշտոնա-  
կան կյանքը գեռևս չեր արտացոլում ակնված դիս-  
կուսիան։ Դիսկուսիան կոլեկտիվում պիտի ե տարվեր  
կազմակերպված, պետք ե տարվեր ճիշտ նույն որին  
ու ժամկն, յերբ այդ որն ու ժամը ցույց կտան...  
Այսոր — դիսկուսիան ե։ Սակայն գլխավորն այն  
ե, վոր — Միխոնովը պիտի հաշիվ տար իր տարած  
աշխատանքի մասին։

### III

Ժամը հինգին քառորդ եր պակաս, յերբ կոլեկ-  
տիվի բյուրոն յեկավ զեկուցողը. այսոր նա կզեկուցե-  
«նոր կուրսի» մասին՝ քաղըյուրոյի բանաձեւերի հի-  
ման վրա՝ նոր կուսաշնարարության խնդիրների շուրջը։

Զեկուցողը Պետրովադի ուայոնական կազմակեր-  
պիչներից մեկն ե։ Մոսկվայի ոպպոգիցիան նրա ու-  
յոնում տարած աշխատանքը կգնահատեր իր տեսա-  
կետից. թե նա արդյոք վորչափ ե նպաստում պաշտ-  
պանելու «պաշտոնական ներկուսակցական ոեժիմը»։  
Սակայն մոտիկից դիսեք նրա ուայոնում տարած աշ-  
խատանքը. գուք կտեսնեք յերեսոյթների ինքնուրույն  
ըմբռնութիւններ։ Կարդացեք նրա՝ Մոսկվայի և Պիտերի  
թերթերում տպված հոդվածները — գուք կտեսնեք  
խմատ, ճշտորոշ հաշիվներ, անվիճելի թվեր, սեփական  
յեղակացություններ։ Բայց, այնուամենայնիվ, նա  
գերադասում ե չգրել, այլ խոսել։ Ամեն որ նա այս

կամ այն գործարանում Յ-ժամյա զեկուցումներ ե  
անում: Նա զգում է, վոր չնայած թվերին և ճշգրիտ  
տվյալներին, տպագիր տառերի ձայնը այնուամենայ-  
նիվ գորշ ե, ճապաղ, յերկդիմի: Չնայած այդ թվե-  
րին, կարելի յե մոլորգել դիսկուսիոն խորամանկու-  
թյունների թղթակույտերի մեջ: Նա զիտե, վոր մաս-  
սան կարիք ունի մարդկային կենդանի խոսքի՝ ամբող-  
ջովին լցված կուսակցական հավատքի կրակով — դա  
տարածայնությունները լուծելու լավագույն ուղին ե:  
Նա զիտե, վոր մասսային պետք ե մոտիկ հասկանալի ձև,  
հարկավոր ե կուսակցական չոր թեզիսների մոտեցումը  
գործարանային առորյա կյանքի հարազատ թեմաներին:  
Այդ գեղքում ամեն ինչ հասկանալի կլինի:

Նա այդ լավ զիտե: Այդպես ե խոսել նա նախան-  
ցյալ որը, այդպես ե խոսել յերեկ, այդպես ել պիտի  
խոսի այսոր, վաղը, մյուս որը...

Այսոր շատ եր հոգնած: Ամեն որ նա Յ ժամ զե-  
կուցում եր: Իսկ կենդանի խոսքն եներգիայի հսկա-  
յական լարումն ե պահանջում:

Կես ըստելի չափ նստելով բյուրոյում, զեկուցովը  
հարցրեց Միլսոնովին.

— Դե, ժամանակն ե, գնանք:

Ժողովը նշանակված ե 5-ին: Միլսոնովը զիտե  
այդ: Յերբ զեկուցովը ներս մտավ — Միլսոնովը նայեց  
ժամացույցին:

Սակայն այժմ նա նորից ե հանում իր ժամա-  
ցույցը: Նայում ե յերկար: Ասում ե,

— Դեռ հինգից քառորդդ պակաս ե.

Ժամանակից քառորդդ ժամ առաջ սպիտակ սեն-  
յակում դեռ վոչ վոչ չի լինի: Իսկ եսոր եւ, բացի  
դրանից, ոռօճիկ ստանալու որ ե: Միլսոնովը կան-  
խորեն կարգադրություն արեց, վոր ոռօճիկների բա-  
ժանման ժամանակ կոմունիստներին չսպասեցնեն:  
Բայց նա զիտե, վոր այսոր ժողովը սովորականից  
ավելի կուշանա:

Սակայն զեկուցովը հոգնել եր: Նա նստած ե  
գլուխը կախ, և ըստ յերեսու յթին, բոլորովին չլսեց Միլսո-  
նովի բառերը՝ «Դեռ ժամը 5-ին քառորդդ պակաս ե»:

Յերեք ըստե անց նորից ասաց.

— Հապա, ժամանակն ե, գնանք:

Միլսոնովը հառաչում ե: Սակայն բոլորը վեր են  
կենում:

Գնում են...

#### IV

Սպիտակ սենյակը մի ակնթարթում կենդանա-  
նում ե. սպիտակ նստարանների միջով ուղղվելով  
դեպի միայնակ կարմիր սեղանը, գնում ե մարգկանց  
մի խումբ, պորտֆելները կոնստանտին: Նրանց մեջ  
են — կոլեկտիվի կազմակերպիչներ, շրջանային կազմա-  
կերպիչներ, մարքսիստական խմբակի դասախոսը, և ելի  
յերկու յերեք հոգի...

Սպիտակ սենյակն իսկույն լցվեց մարգկանցով:  
Ներս ելին մտնում մեկ ~ մեկ, հետո իրար յետեկից,

արագ - արագ ուրախ խմբերով, ապա նորից մեկ -  
մեկ, Յերիտասարդությունը նստում եր կարմիր սե -  
ղանին մոտիկ, մըրուքավորները թիկն ելին տալիս  
յետում: Կանայք — թվով տասնըմեկ հոգի — նստել  
են յուրահատուկ կնավարի, խմբակներով:

Զեկուցողը վեր կացավ, սպիտակ սրահը հան -  
դարտվեց, — ամբոխը փոխվեց կողեկտիվի:

Ինչ վոր մի մեծ քամի կարծես ցըեց թեժեամիտ  
խոսակցությունները — կաթի, շաքարի, յուղի, իրենց  
մանր - մունը կարիքների մասին. Փոխվեց սենյակը,  
փոխվեցին մարդիկ, դեմքերը, դիրքները, չկա այլոս  
հոգնածությունը, մախորկայի ծխի մեջ ցըվեց սպա -  
սումի ձանձրույթը, ուղղվեցին ուսերը, ձգվեցին  
մկանները, սրվեց միտքը:

Այստեղ, յերրորդ շարքում սառած - նստել են  
միենույն դիրքում վեց մարդ: Նստել են կողք կողքի,  
զլուխները քաշ արել, ձեռքները հենել կզակներին,  
լոել: Իսկ աչքները ուշադրությամբ հարել զեկուցո -  
ղին: Յեկ բոլոր մնացածներն ել լոել են: Զեկուցողի  
հոգնած ձայնը խառնվեց խուլ թանձր լուսթյան մեջ:  
Ուզում ե լսել զեթ վորեւ բացականչություն յեթե  
վոչ հաստատման, հավանության ապա գոնե առար -  
կության: Զեկուցողը մի քանի փոազներ բաց թողեց  
հարցերի ձեռվ — լուս են, Զեկուցողը խոսում ե  
կենակոմի դիրքի մասին:

— ... Կանգ չեմ առնի դրա վրա: Դա պարզ ե  
մեր կուսակցական մասսային. հասկանալի՞ յե:

Լսում են: Լուս են:

— ... Դրա համար ել կարծում եմ, վոր մեր կոլ -  
եկտիվի անդամները ծանոթ են դրան...

Լսում են, և լուսում:

Ընդամենը վաթսուն հոգի յեն, վաթսուն միավոր:  
Նրանք լսում են և առայժմ լուսում: Կուսակցու -  
թյունը, դասակարգը, յերկիրը, պատմությունը, —  
այսոր նրանց կարծիքն են հարցնում: Կուսակցու -  
թյունը զիտե, վոր նրանք հասունացել են: Նրանք  
իրենք ել զիտեն այդ: Այս վերջին տարիների ընթաց -  
քում շատ - շատերի մեջ հաստատվել ե ու ամրացվել  
այն զգացմունքը, վորով իրենց զգում են վոչ թե իբրև  
առանձին միավոր, այլ միավոր՝ միլիոնի մեջ. այդ  
բանն ավելացնում ե պատասխանառությունը վոչ  
միայն իրեն, այլ ամբողջի համար: Այս զգացմունքով,  
այս պատասխանառությամբ այլևս նեղ են թվում  
հին ներկուսակցականության շրջանակները: Սակայն  
նախ քան վորեւ նոր բան ընդունելը, հարկավոր ե  
պարզ հասկանալ այն, պետք ե լսել բոլորը մինչեւ վերջ:

Յեկ նրանք լսում են ու լուսում:

«... Ընդհանուր մայր Ռեկի ներսից դուրս  
կդան տարբեր ֆրակցիաներ և խմբավորումներ, և այն  
ժամանակ կգա բոյլշեիզմի ինքնալիկիդացիայի ժամը  
և իսկական գեմոկրատիզմի թագավորությունը...»

Զեկուցողը բերում ե այս կտորը և հոգնած բա -  
ցականչում.

— Ահա թե ինչպես են խոսում մեր թշնամիները:

Նա պարզաբանում ե «քննադատության կոլեկտիվ  
ձայնը» փոազը, յերկար և համոզեցուցիչ կերպով կանգ  
ե առնում միամիտ հավատքի վրա դեպի «զաղափարա-  
կան խմբավորումները...»։ Խուլ, թանձր լուսությունը  
խախտվում ե, լսվում են հավանության ձայներ.

— ...Ասում են, թե կուսակցությունն ապրում  
ե չտեսնված կրիզիս, կուսակցությունը հիվանդ ե,  
վոչ մի առողջ տեղ չկա... Այդպես ե արդյոք:

Յեվ մեկը տեղից.

— Վա՞չ:

— ...Սհա, ընկերներ, իլիչի պլատֆորմը... — զե-  
կուցողը վերցնում ե կարմիր սեղանից ինչ վոր մի  
գիրք և արագ թերթում։ Նա կանգնած ե թեք, գրքի  
վրա կռացած, — ահա... ահա...

— Գտա՛ Սհա եստեղ ե:

Նա խոսում ե Իլյիչի պարզ և հասարակ բառերով։  
Մոտ 5 բողեյի չափ կարդում ե:  
Գիրքը մի կողմ դրեց։

— Վա՞չ, կուսակցությունը հիվանդ չե. կուսակ-  
ցությունը անհույս կրիզիս չի ապրում։ Արդյոք, ըն-  
կերներ, կուսակցությունը կրիզիսի մեջ ե, — այն-  
պիսի կրիզիս, վորից դուրս գալը անհնար լինի։

— Վա՞չ:

— Վա՞չ:

— Վա՞չ:

— Վա՞չ. Կուսակցությունը հիվանդ չե։ Բան-  
վորության ապաղասակարգայնացման պրոցեսը կանգ

ե առել... Դա, ընկերներ, կրիզիսի նշան չե... Դա  
աճման նշան ե...

— Այս, այս կուսակցությունը հիվանդ չե։

— Կուսակցությունն աճում է։

— Այս, այս, այս։

— ...Մենք ավելի հասունացել ենք. հարուստ  
ենք փորձով ու տպավորություններով։

Լուսամուտի մոտ ձախ կողմից բարձրանում ե  
մի ծերունի։ Ընդհատում ե զեկուցողին։

— Կուսակցությունը հիվանդ չե. ինչ բան ե կու-  
սակցությունը... Ավելի լավ ե թող մաս-մաս լինին  
ֆրակցիաներ և խմբավորումներ կաղմողները, քան  
թե կուսակցությունը քայլայվի... Սհա թե ինչ ես  
ասում, ընկերներ...

## V

Վեր կացավ Միխոնովը։

— Ընկերներ, ովք ե ուզում զեկուցման առթիվ  
արտահայտել.

Սպիտակ սենյակը, վոր զեկուցման կեսից թըն-  
դում եր համակրանքի բացականչություններով, հա-  
վանություններով, հարցերով — հանկարծ խաղաղվեց։

Միխոնովը ժպատաց և բոլորին աչքով արեց։

— Ընկեր Գորբիլյեվ, գուք, կարծեմ ուզում ելիք։

Ընկեր Գորբիլյեվը ամենափն չեր ուզում։ Բայց  
ընկեր Միխոնովը շատ լավ ե ճանաչում ընկեր Գոր-  
բիլյեվին։ Ընկեր Գորբիլյեվը այսպիսիներից ե. —

Նստում ե ընկեր Գորբիլյեվը և հանդարտ լսում է վորեկ զեկուցում։ Հանկարծ ընկեր Գորբիլյեվի հարեւանին զեկուցման մեջ վորեկ տեղը դուր չի գալիս։ Նա թեքվում ե դեպի ընկեր Գորբիլյեվի ականջը և փսփսում։

— Սպասիր — թող վերջացնի, յես նրան մի լավ ուտեցնեմ։

Ընկեր Գորբիլյեվը անմիջապես վեր կըթռչեր.

— Թույլ տուր նրան «ուտեցնեմ»։ Յես լավ կուտեցնեմ։

— Յես լավ կուտեցնեմ։

— Զե, յես։

— Զե, յես։

— Քեզ ասում եմ՝ յես ավելի լավ «կուտեցնեմ»։

Յեվ ելի Գորբիլյեվին ե մնում «ուտեցնելու» իրավունքը։

Բացի այդ, ամեն մի զեկուցումից հետո ընկեր Գորբիլյեվն ե անպայման առաջին գուրս յեկողը։ Ընկերները Գորբիլյեվի մասին ասում են.

— Նա — պատեհանովաննի դուրս յեկող ե.

Բայց եսոր ընկեր Գորբիլյեվը «նազ եր անում» կամ թե պարզապես «քեֆը խարաբ» ել։ Ընկեր Գորբիլյեվը դուրս յեկավ և ընկճած հայտարարեց։

— Ի՞նչ ե, ընկերներ, միթե յես պատեհանովաննի դուրս յեկող եմ, ինչ ե։

— Նստիր. — զոռաց նրա կողմը մի խոշոր, լամփաշ մարդ, և ինքը դուրս յեկավ առաջ։

— Ընկերներ, թող չկարծեն վոր մենք պասսիվ ենք, — խոսեց նա նախատինքով. — Չե վոր մենք ասելու բան ունենք, ինչո՞ւ ենք լուռ կացել, — Հը։

Սակայն խոշոր, լամփաշ մարդը սխալվում եր, իրոք վոր ասելու բան չկար. Պարզ յերեսում եր, վոր կողեկտիվը լիովին համաձայն եր զեկուցողի հետ։

Խոշոր, դանդաղկոտ մարդը թողեց իր նախատինքը և գոհունակությամբ իր տեղը նստեց։

Գորբիլյեվը նրան ուղեկցեց գրգռված հայացքով։ Մի րոպե նստեց և ել չհամբերեց, դուրս յեկավ ամբիոն։

— Ընկերներ. իհարկ ե, յես շատ ասելիք չունեմ. իմ միաս ե գալիս հենց անցածը, մասնավորապես քսան մեկ թվին, — վեճն ու թայֆաբազությունը. հաշտության ինդիրն եր մեր առաջ։ Խնդիրը այս եր — կնքել Բրեստ-Լիտովսկու դաշնագիրը։ Յեվ յեթե այժմ թույլատենք խմբավորումները, ապա... — Նա դառնությամբ բռունցքը թափ տվեց։ — Պարզ ե, ընկերներ, վոչ մի խմբավորում. ինչպես վոր կենտկոմն ե առաջարկել — դա մեզ համար որենք ե։

Միխոնովը ուրախ հայացքով նրան ճամբու զրեց իր տեղը։ Նա գոհ եր. ճառախոսները դուրս ելին թռչում, գնդացիրի գնտակների պես, — մեկը, մյուսը, յերրորդը, չորրորդը... տասերորդը։ Լուռ մեկը յետի շարքերից ձայն ստացավ։ Առաջ անցավ ու սկսեց.

— Յես համեմատում եմ կուսակցությունը հենց իմ աղջկա հետ. Հարցնում եմ կնկանից։ «Այ կնիկ, ինչի՞ ե հիվանդ աղջիկ»։ —

«Նրանից, — վոր նա աճում ե»:

Յեկ կամաց սուզվեց իր տեղը: Բոլորը միանդամից ծիծաղեցին — ենպէս վոր՝ պատի վրայից, մախորկայի կապույտ ծխի միջից Ենգելսն ել ժպտաց:

Նորից եյին դուրս գալիս: Նորից խոսում, — խոսում զանազան հարցերի շուրջը: Վերջացնում եյին միհնույն խոսքով.

— Ամենից առաջ — կուսակցական միասնականությունը:

## ՀԻՆԳ ՀԱՐՑՈՒՐ ՀԱԶԱՐ

### I

Հազար ինն հարյուր քսան յերկու թվի մարտ ամսի գիշերը «Պետրովգրադ — Մոսկվա» արագ գնացքը մի ժամվա ընթացքում վաթսուն վերստ եր կտրում: Վաթսուն վերստ... Մթագին, վորպէս ուրվականներ, առաջ են վազում գունատ դաշտերը ձյունապատ թիկնոցներով և պեծին են տալիս: Յեկ նրանց վերել խավարն ել այլ ե՝ կապտավուն ու կենդանի:

Շոգեշարժը մոնչում ե յերկաթե ձայնով: Շոգեշարժը խելագարված առաջ և ընթանում գունատ տափարակի վրա, գիշերով և քամու միջով: Շոգեշարժից թափվում են խոշոր, կարմիր կայծեր: Կայծերը սրբնթաց ձյունն են խրվում, յերկար չեն հանդչում: Խավարի մեջ խուլորեն սուլում են հեռազրային սյուները, հատ-հատ ծառերը, պահապանների հյուղերը, վորոնց պատուհաններում կանաչ լույս ե յերեսում: Զյունապատ թիկնոցների վրա միզասքող յերեսում են անտառների սիլուետները: Այստեղ՝ նրանց միջն գաղտուկ ծածկվել են զյուղերը — հազար տարեկան զյուղերը, համառ և կուչ յեկած, վորոնք այժմ յեփում են հեղափոխության կաթսայում:

Գնացքը մոնչում է յերկաթե ձայնով; Գնացքը խելագարված առաջ է ընթանում գունատ տափարակի վրա: Վագոնները կարծես թռչում են, նետվում, դեն ընկանում: Վագոնների տակ անիմսերի յերկաթե մրրիկ ե, ձայթյուն, դղրդոց, շաջուն, յերկաթը յերկաթին ե զարկում: Գնացքը անթիվ մկաններ ունի և ամեն մի մկանը տաքացել ե: Գնացքը խելագարված ե:

Իսկ միացուցիչ ասպարների վրա, յերկու վագոնների միջև՝ մի մարդ է կանգնած: Կաշվե կուտիկին դիպչում են խոշոր, կարմիր կայծերը, բայց այդ մարդը չի նկատում. կողքից անցնում են, գնում գունատ դաշտերը ձյունապատ թիկնոցներով, բայց այդ մարդը չի նկատում: Նրա ձեռները հպվեցին յերկաթե բռնատեղերին հենց այնպես, ինչպես կուկորդին: Բոնատեղերը մատների տակ ջղաճգաբար գալարվում են: Վոտների տակ ջղաճգորեն զալարվում ե յերկաթե ասպարը: Մարդուն կարծես զցում ե, նետում, պրկում: Իսկ նա անդիտակցորեն, բնագդորեն, համառորեն դիմագրում ե և դիմագրելիս՝ ընդարձանում: Յերեսին քամին ե խփում: Յածից՝ վագոնի տակից անիմսերի յերկաթե մրրիկն ե: Ուժից վեր պայքարից մարդու սիրաը ձգվում ե, ձըգձգվում ուտինի նման: Ներսից տարերայինն ե բարձրանում: Տարերայինը թնդացող արյան մեջ արշավում ե, սքողում ե աչքերը, կուրացնում ուղեղը:

Մի ժամ ու կես առաջ նա կուպեցից գուրս յերկավ վագոնի սրահակը: Կուպեյում լավ եր, լուս և

տաք: Բազմոցի վրա նատած եր քառասուն տարեկան բժիշկը: Բառասուն տարեկան բժիշկը կաշվե կուռտիկ հագած մարդու հետ, ընկեր Բորիսի հետ, վոր Սմոլնիցից պաշտոննեյական գործուղղման եր գնում, յերկար ու բարակ, խառնափթոր, արբշու ոռուսական զրույցներ եր անում:

## II

Յերկար ու բարակ, խառնափթոր, արբշու ոռուսական զրույցներ — հեղափոխության մասին, գյուղացիների, տերտերների, ապրուստի հացի մասին: Պատուհանից գիշերն ե յերեսում: Գնացքը խուլ և արագ է ընթանում: Պատուհանի մյուս կողմը անցնում են ձյունապատ դաշտերը գունատ թիկնոցներով: Կուպեյում ելեկտրականության լույսը հավասար ե լուսավորում: Հավասար լույսի ժամանակ ամենին հնչ հավասար ե և մեղմորեն տատանվում ե: Բժիշկ Նիկոլայեվի խոսքերը արբշու են և անկեղծ, իսկ շարժմունքները անհավասար և արագ: Բժիշկ Նիկոլայեվին մի սխալմունք ե անհանդատացնում: — Մեր հեղափոխության մեջ յեղած սխալմունքը, — ինչպես արտահայտվում ե բժիշկ Նիկոլայեվը:

— Հա, հա, սխալմունք ե, ասում եմ ձեզ, անպայման սխալմունք ե տեղի ունեցել մեր հեղափոխության ժամանակ...

— Վորպիսի, վորպիսի. մարդավարի ասացեք:

Յեկ ընկեր Բորիսը, վոր Սմոլնիյից պաշտոնելաւ կան գործուղղման ե գնում, հանգստորեն նայում ե բժշկի վրա:

Բժիշկը չի պատասխանում: Բժիշկը անձայն պոռշներն ե շարժում և անմիտ նայում ե հատակին: Ընկեր Բորիսը քնել ե ուզում:

Գնացքը խուլ և արագ ե ընթանում:

Հարցրեց բժիշկը՝

— Դեպի Մոսկվա...

Ընկեր Բորիսը բաց ե անում աչքերը: Բժիշկը բաղմոցից կռանում ե դեպի նա և դեմ ե նայում: Տարորինակ հայացք... Աչքերը նեղ են և սուր արտահայտությամբ, կարծես նոր գրչածայր, և լցված են կայծերով: Ընկեր Բորիսը դիտմամբ անշարժ ե նըստած. նրա մարմինը յետ ե ընկել բազմոցի մեջքին, ուսերը — խաչած:

— Վո՞չ Մոսկվա...

Պատասխանը չոր ե և աննկատելի ծաղրական:

Ընկեր Բորիսը դարձյալ փակում ե աչքերը:

Իսկ բժիշկը հանկարծ զվարթ ե դառնում: Յերեսը հիմարանում ե:

— Իսկ ո՞ւր...

«Մի տես, վորչափ անքաղաքավարի յե» — մտածեց Ընկեր Բորիսը: Աչքերը չբացանելով պատասխանում ե՝

— Վոլգայի կողմերը:

— Յես ել Վոլգայի կողմերը, — ավելի զվարթ հայտարարում ե բժիշկը:

— Ինչու եք ուրախանում, — հարցնում ե Բորիսը, աակավին աչքերը բացելով և ավելի ուշադրությամբ և քմծիծաղ դիտելով բժշկին: Այդ քմծիծաղը վոչ թե բժշկին եր ուղղված, այլ իրեն:

«Ինչու եմ յես նրա հետ ժամանակ կորցնում: Աշխատել, թե քնել, — մտածում ե ընկեր Բորիսը և ծուռ աչքով նայում ե իր պորտֆելի վրա, վոր նրա կողքին ե: — Հեղափոխությունը դրան կերել ե... ինաւելլիգենտ... վիթած»:

Բժիշկը քմծիծաղ ընդհատում ե՝

— Ինչու յեմ ուրախանում... չեմ ուրախանում, սիրելի ընկեր, այլ վշտացած եմ, վշտացած... Վշտանում եմ ձեր սխալմունքի համար... Հա, հա, հա... սխալմունք...

Լոռություն:

— Տա, տա, տա, — զարկում են անիվները: Ելեքտրականության պաղ լույսը ընկնում ե բժշկի քառակուսի ճաղատ զլիսի վրա: Քառակուսի ճաղատ զլուխը ձոճվում ե պաղ լույսի մեջ, հարբածի նման, շատ մոռ՝ ընկեր Բորիսի աչքերի առաջ: Ընկեր Բորիսը քնել չի կարողանում. քառակուսի ճաղատը զլուխը փարոսի նման ձերմակ լույս ե տարածում, ստվերում՝ նեղ և սրածայր, վորպես նոր գրչածայր աչքերը, ականջները ձանձրացնում ե փնթվընթոցը — «սխալմունք, սխալմունք»: Յեկ ընկեր Բորիսը զայրանում ե, Ընկեր Բորիսը զուսպ և դժոն բացականչում ե.

— Ի՞նչ տեսակ սխալմունք: Կիսոսե՞ք շնորքով թե վոչ...

Բժիշկը կամացուկ փնտինթում է.

— Այո, այո, ուզում եք իմանալ... Շատ ախորժե, չափազանց ախորժե ե զրուցել... Ինչպիսի՞ն, — հանկարծ զայրանում ե բժիշկը:

— Ուզ, մինուս ունեցող իմաստուններ! Համաշխարհին ճարտարապետներ: Ինքներդ պիտի իմանաք, ինքներդ...

— Զենք իմանում, — դանդաղորեն ընդհատում ե ընկեր Բորիսը և վճռականորեն վեր ե կենում, քնի պատրաստվելով:

Բժշկի դեմքը վախ ե արտահայտում: Բացի վախից, ընկեր Բորիսին շատ ե զարմացնում առանձին գծերի արտահայտության մեջ՝ նկատելի տարօրինակ ցրվածությունը: Ընկեր Բորիսը հաստատուն կանգնած ե Բժշկի առաջ, զրսելով ամուր, քարե ուսերը: Դեմքը հանգիստ ե և արտահայտում ե քնալթաթախ ձանձրույթ: Իսկ Բժշկի նայվածքը տենդոտ ե, հարբած, անշարժ: Հանկարծ բժիշկը շարժեց ձեռքերը, անհանգիստ շարժվեց բազմոցի վրա:

— Սպասեցե՞ք, մի քիչ սպասե՞ք: Ի՞նչ տաքարյունն եք: Հավատացե՞ք, յերեք տարի այդ սխալմունքն ելի վորոնում... Դուք ահա բարկանում եք, չեք հավատում: Իսկ սիրու ցավում ե: Նա զգում եր, վոր մի սխալմունք կա...

Բժշկի այտերը ավելի վառ են կարմրում: Վառ կարմրությունը զրավում է: Ընկեր Բորիսը իր հայցքը նետեց այդ կարմրության վրա. աչքերը ուղղում ե Բժշկի աչքերին և շատ չոր ու ցամաք ընդհատում:

— Դուք, բժիշկ, հարբած եք:

Բժշկը պապանձվում է:

Բժշկի լղար ուսերը կուչ յեկան. Նա տատանվում ե ելեկարականության հավասար լույսի մեջ: Նրա կուրծքը՝ ճնճղուկի մի վանդակ, վոր ծածկված ե ճնոտիներով: Ընկեր Բորիսը դեմք նստած ծխում ե և մտածում. «Մանիսկ ե, ի՞նչ ե: Սատանան զիտե: Ի՞նչ սխալմունք», — ընկեր Բորիսը զգում ե, վոր ինչ մի անախորժ բան անցնում ե նրա մեջքի և ուսերի վրայով: Նա մարքսիստի զտված ուղեղի տեր ե — և զգացողությունը կը կնակի անախորժ ե: Ընկեր Բորիսը բարկացած դրսում ե ամուր ուսերը: Նա բժշկից խոշոր ե, — կուրծքը, ձեռները, ուսերը — այդ բոլորը պատած ե կաշվե կուռտիկով: Բժշկը շարունակ լուսում ե:

Վերջապես, ասում ե կամաց, առանց ծիծաղելու, կարծես ծեծում ե.

— Հարբած: Ճիշտ վոր հարբած եմ: Սակայն յես չեյի կարողանա ուրիշին հենց այսպես ասել: Ափսոս վոր յես ուսւ մարդ եմ: Իսկ դուք ահա այդպես չեք: Դուք ամենքդ ել այդպիսիները չեք... բայց այդ՝ ձեր ուժի հետևանքը չի, այլ ձեր թուլության:

— Ի՞նչ տեսակ սխալմունք: Կխոսե՞ք շնորքով թե  
վոչ...

Բժիշկը կամացուկ փնտինթում ե.

— Այո, այո, ուզում եք իմանալ... Շատ ախորժ  
ե, չափազանց ախորժ ե զրուցել... Ինչպիսի, — հան-  
կարծ զայրանում ե բժիշկը:

— Ուզ, մինուս ունեցող իմաստուններ! Համաշ-  
խարհային ճարտարապետներ: Ինքներդ պիտի իմա-  
նաք, ինքներդ...

— Զենք իմանում, — դանդաղորեն ընդհատում ե  
ընկեր Բորիսը և վճռականորեն վեր ե կենում, քնի  
պարաստվելով:

Բժշկի գեմքը վախ ե արտահայտում: Բացի վա-  
խից, ընկեր Բորիսին շատ ե դարձացնում առանձին  
գծերի արտահայտության մեջ նկատելի տարրինակ  
ցրվածությունը: Ընկեր Բորիսը հաստատուն կանգ-  
նած ե բժշկի առաջ, դրսելով ամուր, քարե ուսերը:  
Դեմքը հանգիստ ե և արտահայտում ե քնաթաթախ  
ձանձրույթ: Իսկ բժշկի նայվածքը տենդուտ ե, հար-  
բած, անշարժ: Հանկարծ բժիշկը շարժեց ձեռքերը,  
անհանգիստ շարժվեց բազմոցի վրա:

— Սպասեցէք, մի քիչ սպասեք: Ի՞նչ տաքարյունն  
եք: Հավատացեք, յերեք տարի այդ սխալմունքն եյի  
վորոնում,.. Դուք ահա բարկանում եք, չեք հավա-  
տում: Իսկ սիրոս ցավում եք նա զգում եր, վոր մի  
սխալմունք կա...

Բժշկի այտերը ավելի վառ են կարմրում: Վառ  
կարմրությունը գրավում ե: Ընկեր Բորիսը իր հա-  
յացքը նետեց այդ կարմրության վրա. աչքերը ուղ-  
ղում ե բժշկի աչքերին և շատ չոր ու ցամաք ընդ-  
հատում.

— Դուք, բժիշկ, հարբած եք:

Բժիշկը պապանձվում ե:

Բժշկի լղար ուսերը կուչ յեկան. նա տատան-  
վում ե ելեկտրականության հավասար լույսի մեջ:  
Նրա կուրծքը՝ ճնճղուկի մի վանդակ, վոր ծածկված  
ե հնոափիներով: Ընկեր Բորիսը դեմը նստած ծխում  
ե և մտածում. «Մանիակ ե, ի՞նչ ե: Սատանան գիտե՞  
ի՞նչ սխալմունք», — ընկեր Բորիսը զգում ե, վոր ինչ  
մի անախորժ բան անցնում ե նրա մեջքի և ուսերի  
վրայով: Նա մարքսիստի գտված ուղեղի տեր ե — և  
զգացողությունը կը կնախի անախորժ ե: Ընկեր Բորիսը  
բարկացած դրսում ե ամուր ուսերը: Նա բժշկից  
խոշոր ե, — կուրծքը, ձեռները, ուսերը — այդ բոլորը  
պատած ե կաշվե կուռափկով: Բժշկը շարունակ  
լուս ե:

Վերջապես, ասում ե կամաց, առանց ծիծաղելու,  
կարծես ձեծում ե.

— Հարբած: Ճիշտ վոր հարբած եմ: Սակայն յես  
չեյի կարողանա ուրիշին հենց այսպես ասել: Ափ-  
սոս վոր յես ոռւս մարդ եմ: Իսկ դուք ահա այդ-  
պես չեք: Դուք ամենքդ ել այդպիսիները չեք... բայց  
այդ՝ ձեր ուժի հետևանքը չի, այլ ձեր թուլության:

Ընկեր Բորիսը լուռ եւ Նա չի ուզում բժշկին վոչ  
մի հարց տալ: Սպասում եւ, յերբ բժիշկը ինքը կասի:  
Իսկ բժիշկը, պատասխանի չսպասելով, զվարթորեն  
ծիծաղում եւ և իր ձեռները կատվի շարժվածքով, վոր-  
պես թաթեր, դնում եւ ընկեր Բորիսի ծնկների վրա:

— Հարբանձ: Հա... Իսկ ի՞նչպես եք դուք, թան-  
կագին ընկեր, յենթաղը ում: Ինչպիսի՞ հեղափոխու-  
թյուն եւ տեղի ունեցել Ռուսաստանում: Դաս-ս-սա-  
կարգային, բ-բանվորական, պը-րոլետարական: Ասա-  
ցք, ինդրեմ...

Բժշկի միտքը պարզ եւ: Ընկեր Բորիսը մի ակն-  
թարթում ըմբռնում եւ այդ միտքը և ակամա ծիծա-  
ղում: Ծիծաղելով ել պատասխանում եւ.

— Այդպես, այդպես... Գիտեք, բժիշկ, այն, ինչ  
վոր դուք մտածում եք — ախմախ բան եւ:

Բժիշկը բազմոցից վեր եւ թռչում և գրգռված պա-  
տասխանում:

— Ախմախ բան: Լավ ասացիք, չափազանց լավ:  
Սակայն թույլ տվեք չհավատալ. — դա ասված եւ պար-  
տազգորեն! Ստիպված եյթք: Առաջուց ինձ հայտնի յեւ:  
Այս թույլ տվեք պարզամտորեն տեղեկանալ՝ քանի  
տարեկան եք:

Ընկեր Բորիսը իր գեմքին լուրջ արտահայտու-  
թյուն եւ տալիս և պատասխանում:

— Քանի տարեկան — քսանութ:

— Քսանութ — տենդում գոչում եւ բժշկը: Քսան-  
ութ, իսկ յես՝ քառասուն: Ընդդժում եմ առանց դա-

սապարտելու: Զե՞: Պարտավորությունը հասկանալի  
յե՞: Հարբանձ: Ախմախ բան: Դուք խիստ մարդիկ եք,  
սարսափելի: Գոնե դա ուժից լիներ, բայց դա թու-  
րությունիցն եւ: Թուլությունից, թուլությունից դուք  
պարտավոր եք ձեր հեղափոխությունը ընդունել բան-  
վորականի տեղ: Պարտավոր եք: Յեվ յես հավանու-  
թյուն եմ տալիս: Զգում եմ, հասկանում, վոր ձեր  
ձակատը դիպել եւ սխալմունքին... կանգնեցեք... ցան-  
կանում եմ... ահա... — բժշկի ձայնը սկսեց կարգել...

— ... Թոռների համար, թոռների... Հեղափոխու-  
թյունը վոչ-բանվորական կթվա: Ուամկական վոգու  
հոս կունենա... քառասուն տարի... պատմական հե-  
ռանկար... ափսոսում եմ...

Բժիշկը խեղդվում եր: Ոդի կարիք եր զգում:  
Ընկեր Բորիսը սպասեց և ապա հարցը եց.

— Ուամկական վոգի՞:

— Հա, հա, ուամկական վոգի: Խավար: Անթափան-  
ցելիք: Ո՞յ, ոյ — վնասակար վոգի: Պրոլետարականը, սո-  
ցիալիստականը կխեղդվի: Յեվ դուք շնչասպառ կլի-  
նեք: Դրա համար ել ձեզ խղճում եմ և սիրում:  
Կսատկեք, կզամ ձեր գերեզմանի մոտ և կյերկրպա-  
գեմ: Այս ժամանակ և անդթությունը կարդարացնեմ:  
Հուզմունքով, արտասուքներով կմտաբերեմ թե ինչպես  
յերեսիս խփեցիք՝ հարբած, ախմախ բան... Իսկ այժմ  
յես ատում եմ, ատում: Իմ Ռուսաստանը, հարա-  
զատ, ոռոսական... Ռուսաստանը ուզում եք ձեր  
յետից քարշ տալ: Ինչո՞ւ, ասացեք, ինչո՞ւ: Ինչո՞ւ:

Թող նա անմիտ, տխուր, խավար լինի: Բայց դուք նրա հոգին, ոռւս հոգին, ոտարի ձեին եք հարմարեցնում: Սրտի տեղ մեքենա: Սուրբ տրոփյունի տեղ մեքենայցում: Մինչդեռ դա կորստարեր ե, մահացնում: Հասկանո՞ւմ եք արդյոք, կորստարեր: Մահացնում ե: Սատկող Յեվլոպան բուժում եք Ծուսաստանի միջոցով... ասում եմ... Գիտե՞ք յես ինչ կանելի:

— Գիտեմ, — սառնասիրտ ասում ե ընկեր Բորիսը, միայն պոռշները շարժելով:

— Յես... յես կավերեյի ձեր Մոսկվան... բոլորը, բոլորը՝ և կրեմլը, և անգամ Վասիլիյ Բլաժեննիյի հինավուրց տաճարը, Կկարեյի կհանեյի այդ մեքենայցրած սիրտը և հինգհարյուր հազար խաչ կկանգնեցնեյի: Իսկ խաչերի վրա ձեզ կխաչեյի, հինգ հարյուր հազար մարդ... ամենքիդ՝ մինչ վերջինը: Յեվ մակարություն կկախեյի, վոր բոլոր յերկրներին տեսանելի լիներ, անգամ մոլորակներին. «Այստեղ խաչված են հինգհարյուր հազար նոր քրիստոներ, վորոնք փոքր մի սխալմունք են արել, — գիտեք, հենց այն, վոր յերկու հազար տարի առաջ տեղի յեռնեցել, — և ապա՝ ժողովուրդներ, յեկեք և յերկրպագեցէք»: Յեվ գիտեմ, վոր կգային և կյերկրպագեյին: Յեվ յես առաջինը կգայի: Ամենքն ել կյերկրպագեյին իրենց հազարտարեկան չիրականացած յերազանքին... Զե վոր չի կարող, չի կարող նա հավիտյանս իրագործվել: Յես չեմ հավատում: Դա մարդու և իրերի բնության հակառակ ե...

Գնացքը խուլ և արագ ե ընթանում: Պատուհանի յետից գունատ շարքերով գունատ թիկնոցներով անցնում են զիշերային դաշտերը: Ընկեր Բորիսը դժկամակությամբ ասում ե.

— Շարադրեցեք ձեր թեսրիան... այսինքն սխալ-մունքը:

— Բնը. գիտեյի: Զեր աչքերը, աչքերը պահանջկոտ են, — հաղթական ձայնով գոչում ե բժիշկը:

— Սպասեցեք, դե թույլ տվեք...

— Զեմ սպասի, չեմ թույլ տա: Աչքերը, ձեր աչքերը պահանջկոտ են: Դեռ յերեկ տեսա, յերբ մտաք: Կենդանի հոգի յե, մտածեցի, կաշվե կուռափկով: Զափաղանց ուրախացա: Կհավատմք, յերեք տարի յե, վոր չարտահայտված սխալմունքը սիրտս մաշում ե: Ցավում ե... այստեղ այրում:

### III

— Սպասեցէք: Մի բռպե, — ասաց բժիշկը:

Բժիշկը ցանցից հանեց հյուսված ճամբորդական զամբյուղը և դուրս հանեց կեսշանոցը՝ սողային ջրով:

— Տաք խառակցությունից հետո չեյիք ցանկանա պաղեցնող խմիչք, — մեղմ հարցը եց նա՝ մեղավորի պես ժպտալով:

— Պատմեցէք, — չոր ասաց ընկեր Բորիսը, չպատասխանելով ժպիտին:

Բժիշկը, ծանր ախ քաշելով և փռնչալով, շնեց ուղղակի խմում եր սոդային ջուրը: Խմելուց հետո դարձյալ ախ քաշեց:

— Ինչպես կամենաք, — սկսեց բժիշկը, — բայց յես ոռւս մարդ եմ, և վորպես ոռւս՝ սիրում եմ ոռւսաց հեղափոխությունը: Յես ել տասնյոթ թվին կուսակցության մեջ եյի, իսկ տասնութ թվին հեռացա... մի ընդհատեք ինձ, յես այժմ ուշքի յեմ յեկել: Իսկ պատմում եմ այն պատճառով, վոր կաշիի կուռափի տակից ոռւս մարդու յեմ տեսնում: Ահա յես ել եմ ոռւս և ըստ ոռւսականի սիրում եմ հեղափոխությունը: Դուք ել սիրում եք... Ալսինքն վոչ միայն ահա, դուք, ընկեր... ներեցեք... ձեր ազգանունը... այլ բոլոր հինգ հարյուր հազար մարդիկն ել: Բայց յես վախենում եմ ձեր սիրուց, վախենում եմ Ռուսաստանի համար: Ուզում եք մի ինչ վոր բանով փոխարինել, այսինքն Ռուսաստանը... այո, այո, մի առարկեք: Դա նացինալիքմ չե: Դա իմ ոռւսական անհատականությունն ե, ժողովրդի անհատականությունը, յեթե ուզում եք: Յես ոռւս եմ, և յերբեք չեմ մոռանա, վոր մենք առաջիններս ենք ստեղծում համամարդկային հեղափոխությունը: Առաջիններս, առաջիններս, — բժիշկը ճշաց: — Առաջիններս գիտակցեցինք, վոր նրա մեջ արտահայտվում ե մարդկային վոգու մեծությունը: Գիտակցեցինք և հավատացինք: Յեվ վոչ թե մեկը, այլ ամենքը, հինգ հարյուր հազար մարդ: Դրա համար սիրում եմ և խոնարհում:

Բայց այստեղ ծածկված ե մի վոքրիկ վողբերգություն: Փոքրագույն: Մենք անիմաստ մանուկներ ենք, ուրիշ ժողովուրդների միջև, իսկ Յեվրոպան պառավ, վորձված գայլ ե: Յեվրոպային հարկավոր ե վոչ թե հեղափոխություն, այլ գիտական սոցիալիզմ, արտադրական հարաբերություններ, շահությներ, վասաներ, ոենտա, առևտուր, գուցե թատրոն, արվեստ, ամենը, ամենը, բայց վոչ այն, վորի համար մենք ոռւսներս յեռում ենք: Մենք խոմ, հա-հա-հա, ժողովուրդների յեղբայրության մասին ենք մտածում, սոցիալական հավասարության... թու, սատանան տանի, մի ինչ վոր սուրբ եշեր ենք!...

Բժիշկը խուլ ծիծաղեց, ատամները կրճաեցնելով:

— ... Թեպետ, գուցե և եշեր չենք: Անգամ իսկապես եշեր չենք: Զեր մեջ, հինգ հարյուր հազար մարդկանց միջև կա իմաստուն անխելքների մի խումբ: Նրանք ամեն ինչ գիտեն և տեսնում են: Միայն նրանք ել սխալվում են մի պստիկ, փոքրիկ հարցում: Յեվրոպային համոզելու համար՝ նրանք ուսմկական, խավար հեղափոխության, արեխ հագած մամոնտի վրա, հագցնում են գիտական սոցիալիզմի թիկնոցը, ամեն տեսակ արտադրական հարաբերությունների: Ասելով՝ տես, պառավ գայլ, հավատա մեզ, մենք վոչ թե հենց ենպես ենք վարփում, մենք վոչ թե առանց յերկար ու բարակ մտածելու յենք ջարդում, վոչ թե հաղարամյա անմարմին յերազանքն ենք կրկնում... — մեղանում ուսմկական խոսվություն չի: Հավատա, պա-

ուավ գայլ... Գաղտնի կասեմ ձեզ, թանկագին ընկեր,  
վոր հենց մեզ, ոռւսներիս, անգամ իմաստունների  
այն խմբակին, այդ բոլորը հարկավոր չի: Զեզ ել  
հարկավոր չի: Ինձ ել հարկավոր չի: Մեզ միայն  
հարկավոր ե վոր մեր սիրտը յեռ գա և մեր վոգին  
ըոնկի: Այս... Յեզ հենց այդտեղ ե սխալմունքը:  
Յեվրոպան վոչչին չի հավատա: Հենց դրանումն ե  
չարագուշակ վողբերգությունը: Գուցե մենակ մենք,  
ոռւսներս, մեր մոլորակի վրա դեռևս մի վորեւ բանի  
հավատում ենք, մի բանով յեռ գալիս: Գուցե մեր  
հեղափոխությունը համամարդկային, տիյեղերական  
վոգու վերջին բռնկումն ե: Նա մեռավ Յեվրոպայում:  
Այն որից, յերբ Յեվրոպայի վրայով անցավ բացասա-  
կանության անոելի ստվերը, հիասթափության, սկեպ-  
տիցիզմի, ֆառւստի ստվերը, — Յեվրոպայում մեռավ  
կենդանի խոռվության վոգին: Յեվրոպան — գերեզմա-  
նատուն ե:

Բժիշկը ձայնը կարեց: Նրա ձեռները դողում  
ելին: Պատուհանի յետից անցնում ելին դաշտերի  
շարքերը գունատ թիկնոցներով:

Ընկեր Բորիսը հարցրեց հետաքրքրվելով.

— Ուրեմն, դուք չեք հավատում, վոր Յեվրոպա-  
յում կինդի հեղափոխությաւն:

— Զեմ հավատում: Իսկ դուք, դուք միթե հավա-  
տում եք: Ասացեք, — խուլ ձայնով գոչեց բժիշկը:  
Ընկեր Բորիսը ժպտում ե:

— Վոչ միայն հավատում ենք, այլ և զիտենք: Նա  
կոտ, կոտ:

— Սատանան ձեզ զիտի, — նորից խոսեց բժիշկը  
ավելի հանգիստ ձայնով, — կամ դուք համառ եք յեզ-  
ների պես, կամ անհուսալի կուրացել եք: Դուք ան-  
գամ չեք հասկանում ձեր սեփական ոռւս հեղափո-  
խությունը: Չեք հասկանում, — նորից բարձրաձայն  
դուաց բժիշկը:

— Դուք կոչ արիք բոլոր յերկրների պրոետար-  
ներին, իսկ յեկավ մուժիկը, խավարամիտ, գզզված,  
վայրենի: Յեկավ տրեխ հագած մամոնտը: Իսկ մա-  
մոնտը հաց ունի: Հասկանո՞ւմ եք, թե ինչ ե հացը:  
Հացը սարսափելի ուժ ե: Հացը — անոելիագույնն ե  
յերկրի վրա: Թագավորից, աստուծուց, ձեր ուտո-  
պիաներից ավել... մուժիկը դրա համար ել մամոնտ  
ե՝ վոր հացը նրա ձեռքումն ե: Իսկ դուք, անփելք-  
ներդ, դեռ նրա մեջ զարթեցնում եք այդ ուժի զի-  
տակցությունը, զիտակցությունը այն բանի, վոր հացը  
նրա ձեռներում ե:

— Միթե այդ վատ ե, — միամտորեն հարցնում ե  
ընկեր Բորիսը:

— Դադարեցեք: Դուք ամենքդ այդպես եք: Բայց  
յես ձեզ չեմ հավատում: Դուք քաջ եք, բայց յես  
չեմ հավատում: Հարկավոր չեր մուժիկին զիտակցու-  
թյան բերել, բավական կիներ, վոր նա միայն հաց  
ունենար՝ առանց զիտակցության: — Բժիշկը ընկավ  
բազմոցի վրա և դեմքը խրեց մեջքին: Բժշկի աչքերը

բաց են: Ուղղակի աչքերի առաջ — պատառուած պլյուշի վրածածկն եւ: «Բոնության ամբողջ աշխարհը մենք կավրենք», — մտարերում եւ բժիշկը: Գլուխը շուռ չդարձնելով՝ բժիշկը ձայնով փնթփնթում եւ:

— Իսկ նորը, նորը ո՞վ պիտի կառուցի:

Իսկ ընկեր Բորիսը նայում եւ բժշկի քաշալացող ծոծրակին, նայում եւ ուժով, համառորեն, հաստատ, յերկար:

Ցեղ յերբ բժիշկը բարձրացնում եւ իր գլուխը, ընկեր Բորիսը ասում եւ շեշտելով.

— Ընկեր բժշկ, դուք վատ մարքսիստ եք. կաղմակերպված պետության մեջ միշտ կդանվեն այնպիսի սոցիալական ուժեր, վորոնք կարողանան ձեր հացի մետաֆիզիկական ուժը հավասարեցնել:

Բժշկի շուռ յեկած գլխի վրա աչքերը անհմաստ են դառնում: Հանկարծ բժիշկը վեր եւ թռչում խայթվածի նման:

— Հացը մետաֆիզիկան եյ, — զոչում ենա սուր ձայնով, համարյա սարսափով: — Հաց: Ոհ... ինչու յեք աչքերիս թող փշում ձեր մարքսիստական կանոններով — շարունակեց նա ավելի հանդիսատ. ճիշտ եւ, յերկրի վրա կա մի ուժ, վոր ընդունակ եւ հացի սարսափելի ուժը հավասարակշռել: Բայց դուք ինքներդ նրան ժխտեցիք — դա սատկած ուռւս տերտերի ուժն ե... Մի ծիծաղեք, մի ծիծաղեք: Նա յե ծիծաղում, ով վոր վերջինն եւ ծիծաղում: Ավելի լավ եւ մտաբել եցեք ահագին, խավար, ցարական Ռուսաստանը:

Ասացեք, միթե թագավորին, մինիստրներին, ժանդարմներին, խաղաղավնիկներին, բոլոր այդ աղոթը կարելի յե յերեակայել առանց մուժիկի սատկած պոպի: Իհարկե վոչ: Նրանք կիսեղովեցին խավար ռամկական ծովի մեջ: Վորովիհետև նա իր ձեռներում սարսափելի ուժ ունի՝ ապրուստի հացի ուժը: Իսկ դուք Ժիտեցիք... այս:

Բժշկը չարախնդացությամբ ծիծաղում եւ:

— Սխալմունք: Սխալմունք, սիրելիս: Հարկավոր չեր սատկած, ռամկական տերտերին հաշվից հանել: Այժմս — վերջ: Առանց տերտերի դուք չեք հաղթի մուժիկին: Այո...

Գնացը անսպասելի դանդաղ եւ առաջ գնում, կանգ եւ առնում: Պատուհանից յերկում են մի փոքրիկ կայարանի լույսերը: Արագ գնացը այստեղ չպետք եւ կանգնի:

— Զննա, անկարգություն, — զոչում եւ բժշկը խոպոտ ձայնով և զարկում եւ ապակին:

#### IV

Փոքրիկ կայարանում խոնավ, խիստ քամի յե փշում, մարտ ամսի փաթիլ-փաթիլ ձյուն եւ գալիս: Զյունածածկ գնացը անշարժ եւ: Զյունածածկ գնացը առջևից ծանր շնչում եւ շոգեշարժը: Միջազգային վագոնների պատուհաններից պայծառ լույս եւ թափվում:

Սպիտակ փաթիները, վորոնց դուրս ե քշում խա-  
վարից թունդ քամին, պլատֆորմի պայծառ լապտեր-  
ների վրա յեն ընկնում, կպչում են ժպտացող ապա-  
կիներին և հալվում, յուղի պես հալվում։ Կամ թե  
պեծին տալով փայլուն ապակու վրա, նորից անհե-  
տանում են մթության մեջ։ Քիչ մարդ կա։ Գնացքին  
վոչ վոք չեր սպասում։ Բազաժի վագոնի մոտ և վա-  
գոնի տակ մի խումբ մարդիկ կանգնած են լապտեր-  
ները, վագոնի յերկաթե բանալիները և ելի մի ինչվոր  
գործիքներ ձեռներում բռնած։ Վխառում են։ Իրար  
հետ խոսում են։ Յերկաթը յերկաթին խփելու հընչ-  
յուններ են լսվում։ Մի ինչվոր բան փչացել ե բա-  
զաժի վագոնում։ Այդ պատճառով ել կանգ եր առել։  
Բազաժի վագոնի տակից լսվեց մի հաստ, խոպոտ ձայն։  
— Պէտքա, շուտ դեպո գնա, ասա — վագոն  
հիսուն յերկու — վաթսուն յոթ...

Պլատֆորմի վրա, լույսի շրջանում, դուրս թռավ  
մի կայտառ կարմիր-բանակային։ «Յեփջուր, վո՞ր-  
տեղ ե յեփջուր» — զոռաց կայտառ կարմիր-բա-  
նակայինը։ Նա հազին ուներ միայն զիմնաստյորկա,  
և նոր կոշիկները ուրախ ձայնում եյին թաց տախտակ-  
ներին դիպչելիս։ Վազվում եյին, ով գիտե վորտե-  
ղից դուրս յեկած ծխախոտ վաճառողները և բուլկե  
և ձու ծախող կանայք։ Առաջին կարգի լուսավոր-  
ված դահլիճից դուրս վազեց փոքրիկ, կարակուլե  
մուշտակ հազած մի տիկին, վոր ամբողջապես կոկե-  
տության և գեղի արտահայտություն եր։ Տիկինը

բոնեց իր կողքով շուտափույթ անցնող յերկաթուզա-  
յին՝ ձյունով պատած պալառոյի փայլուն կոճակից և սեղ-  
մելով շրթունքները դիմեց՝ «պարզոն, խնդրեմ...» —  
«Քաղաքացուհի, դիմեցեք սատանային», — բարկացած  
գոյեց յերկաթուղային պալտոն և ավելի արագ սուզ-  
վեց ձյունի և քամու մեջ։ «Ոկնեցեք Վոլգայի շրջանի  
սովորականերին» պլակատի մոտ վոչ արագ քայլելով զբոս-  
նում եր մի խոշոր մարդ, վոր հազին ուներ վոչխարի  
մորթուց կարած մուշտակ և ձեռքում բռնած եր կանաչ  
լապտեր։ Մուշտակի մեջքը և գզգզված ոձիքը նույնպես  
ծածկված եյին ձյունով։ Մեկը վագելիս պարզված  
ձեռներով դիպավ այդ մեջքին և կանաչ լապտերը  
որորվեց և դարձավ կարմրականաչ։ Կայարանի յե-  
տեկից, ձյունոտ և քամու մթության մեջ ապրան-  
քային վագոնների մի յերկար շղթա յե։ Վագոնները  
անշարժ են, սկին են տալիս կիսախարուսիկ շղթայի  
նման։ Նրանց կտուրները պղտոր են, կապույտ — ձյու-  
նապույն են, կարծես ծածկված են կապտավուն սա-  
վանով։ Ինչ-վոր տեղ թույլ խրխում եր մաներող  
շղթեշարժը։ Մթության մեջ, կայծակի նման, բըռն-  
կում եյին սուլոցները։ Յեկ բազաժի վագոնի մոտ հըն-  
չում ե յերկաթի խոռ և արագ թղկթղկոցը...

Յերկիրը նման չի յերկնքին...

Յերկրի վրա յերկաթի արագ թղկթղկոց... յեր-  
կրի վրա հազարավոր, տասնյակ հազարավոր պլակատ-  
ներ՝ «Ոկնեցեք Վոլգայի շրջանի սովորականերին»։ Յեր-  
կրը ՌԵՍԵՖԵՍԵՌԵՅԻ մասին հեքյաթ և ստեղծում։

Իսկ յերկնքում:

Փոքը կայարանի վերև յերկինքը խուլ ե, դատարկ ե, — խուլ ե ինչպես հսկայական փլատակ, վորպես անգոյության մի փոս: Փլատակից դուրս ե սողում՝ կախվում ե ծանր, վիսրուն խավարը: Յերկնքից յերկիր ե սողում: Ճնշում ե դաշտերը, քաղաքները, փոքը կայարանը, ուղեղը, սիրաը...

Գնացքը կես ժամ կանգնած ե: Բժիշկը դարձյալ հարբած ե, խմել ե կոնյակի մնացորդները և այժմ, ընկեր Բորիսի հետ թեանցուկ, պլատֆորմի վրա զբոսնում ե զիշերվա և քամու միջով: Բժիշկը խոսում ե, խոսում, խոսում: Ընկեր Բորիսը լսելով կուրծքը քամուն դեմ ե տալիս... Անսպասելի՝ ընկեր Բորիսը ընդհատում ե բժշկին.

— Իսկ ասացեք, բժիշկ, ինչո՞ւ յերկիրը նման չի յերկնքին:

— Դա դիալեկտիկա յե, — հայտնում ե բժիշկը: — Զես, վողորմած տեր, տասնեհինգ տարի գեմստվոյում բժիշկ եմ յեղել: Հերքեցեք առանց դիալեկտիկայի...

Նրա փոքրիկ աչքերի մեջ աննկատելի թռչում ե անդրադարձող լապտերի լույսը:

— Զեր աչքերում լապտերն ե, — մոայլ ժպիտով ասում ե ընկեր Բորիսը:

Բժիշկը որորվելով կանգ ե առնում, շտապ դուրս ե քաշում իր ձեռքը ընկեր Բորիսի թերից, հետո բարկացած ճշում ե.

— Ստորություն ե, ստորություն, ստորություն:  
Զեզ հետ լուրջ հարցերի մասին են խոսում...

— Ներեցեք...

Բժիշկը մի վայրկյան լուռ ե, անմիտ նայում ե աչքերին: Մաշված թերթերունքների տակից փայլում ե պըղտար անվստահությունը: Անվստահությունը քիչ շողում ե և հանգչում: Հանկարծ բժիշկը միանգամից շուռ ե գալիս և, աշխատելով հաստատ քայլել գնում ե զեսի գնացքը: Բայց ինչո՞ւ քայլ անելուց հետո պոկում ե զլսից մորթե գտակը և շարժելով յետ ե դառնում:

— Գիտե՞ք, գիտե՞ք դուք ինչ արիք իմ Ռուսաստանի հետ:

— Ի՞նչ, — անսպասելի թշնամությամբ հարցնում ե ընկեր Բորիսը:

Բժիշկը վհատ շարժում ե գտակը:

— Տեսնում եմ, ահա բարկանում եք, ուրեմն իրավացի չեք... Կամ՝ չգիտեմ ինչպես անել... Կամ գուցե ձեր ներսը ոտարի աչքերիցն եք պահպանում: Դուք ամուր մարդիք եք: Իսկ յես ահա չեմ կարող...

— Բժիշկ, կարճ...

Բժիշկը ցնցվում ե և հազնում գտակը:

— Կարճ... — չարացած տում ե նա: — Իսկ Ռուսաստանի հետ ի՞նչ արիք. Ի՞նչ: Ռուսաստանը հազար տարի իր ճանապարհով եր գնում: Հա, հա-հա, հազար տարի, իսկ դուք, — կարճ... Անգամ չեր գնում, այլ քարշ գալիս, հազիվ գնում, — քարշ եր դալիս

դանդաղ, քեզեալով, ազդրերը շարժելով։ Ահա, ինչպես  
քարշ են գալիս հաստիետեալոր ոռւս բարաները վեդ-  
րոներով ջուր կրելիս։ Տատանվելով։ Քեզեալով։ Իսկ  
դուք, սատանան զիտե թե ինչու, նրան կանգնեցրիք  
ոելսերի վրա։ Ինչու։ Ինչու։ Իսկ նա ահա հինգերորդ  
տարին ե խելագարի պես թռչում ե։ Ինչպես այս  
արագ գնացքը...

— Այդ ճիշտ ե։

— Իհարկե ճիշտ ե։ Ճիշտ ե։ Ուղիղ ե։ Ինչումն ե  
ձախորդությունը։ Նա իր ճակատը չի ջարդի։ Մի  
անհանգստանաք։ Զեղ ել, վաղ թե ուշ, ձորը կոլորի։  
Դա ել ճիշտ ե։ Բայց բանն այդ չե, վոր դուք ձորը  
կոլորիք։ Բանն այն ե, վոր այդ վաղքի ժամանակ  
նա իր լքցրած վեղրոն մինչև վերջին կաթիլը կթափի։  
Իսկ վեղրոյի մեջ մերն ե։ Հարազատը։ Ռուսականը, —  
ճշաց բժիշկը։

Ընկեր Բորիսը ուզում ե չար և ուրախալի պա-  
տասխանել, վոր Ռուսաստանը խկապես ոելսերի  
վրա յե կանգնեցրած, վոր նա արագ ընթանում ե,  
զիսապատառ, բաց ընթանում ե, իմանալով թե ուր  
և ինչի համար, և վոր նա չի կորցնի իր ժողովրդա-  
կան անհատականությունը, ինչպես չի կորցնի առան-  
ձին մի մարդ՝ գտնվելով սոցիալապես հավասար հա-  
սարակության մեջ։

Բայց Ընկեր Բորիսը՝ իր առաջ, շատ մոտիկից, լապ-  
տերի լույսի տակ տեսնում ե նրա այլանդակված  
յերեսը և չի շտապում։

Բժիշկը նրա վրա նայում է համարյա խելագար  
հայացքով։ Յեվ հանկարծ կուչ ե գալիս և դարձյալ  
զնում դեպի գնացքը։

## V

Մարտ ամսի գիշերը գնացքը պոկիվեց տեղից։ «Պե-  
տրողրադ — Մուկվա» արագ գնացքը հասնում ե հասա-  
րակ գնացքին։ Իշեանից յերեք րոպե յե անց — յոթա-  
նասուն վերստ։ Հինգ րոպե անց — յոթանասուն հինգ։  
Զ-զ-ու-նու, — շվացնում ե քամին։ Գ-զ-ո-ո-ո, դըղը-  
գում են ծանրակշիռ վագոնները։ Ծանրակշիռ վագոն-  
ները կարծես կտրվում են, նետվում, դեն ընկնում։  
Վագոնների տակ անփակերի մըրիկ ե, շաչյուն, ճայ-  
թյուն, յերկաթը յերկաթին ե զարկում։ Գնացքը ան-  
թիվ մկաններ ունի և ամեն մի մկանը տաքացել ե։  
Գնացքը խելագարված ե։ Գնացքը ընթանում ե գի-  
շերվա ու քամու միջով։

Գնացքի խենթությունը անցնում ե ընկեր Բո-  
րիսին։ Ընկեր Բորիսը մնաց վագոնի սրահակի վրա,  
վոր մտածի այն բանի մասին թե ինչ եր ասել  
ըժիշկը։ Ընկեր Բորիսը համառ կերպով ե մտածում,  
մեթոդաբար, վերլուծելով։ Ընկեր Բորիսը մարք-  
սիսի զտված ուղեղի տեր ե, — խիստ պարզահայտ,  
ըմբոստ։ Բայց շուրջը գիշեր ե, խավար, մոնչոց,  
դղրդոց, ճայթյուն, հողմ։ Արտաքուստ տարերայինը  
դուրս ե հանում տարերայինը ներսից։ Ընկեր Բո-  
րիսը

ըիսի արյունը դղբում եւ Տարերայինը արյունի մեջ  
արագ ե արշավում։ Խփում ե գլխին։ Դուքս և նե-  
տում բոլոր բանավոր մտապատկերները։ Միաքը,  
մեթողը, վերլուծությունը — ճմլած, ճխլտված, ջլատ-  
ված են։ Տեղի, ժամանակի և ինքնազգացողությունը  
պղտորվել են։ Գլուխը ուռչում ե, ուռչում է յեր-  
կաթե թնդոցից, դղբոցից, ճայթյունից։ Ընկեր Բո-  
րիսին թվում ե, փոր իր գլուխը ահազին ե, գնդաձե,  
ծանր, ինչպես այդ լինում է քնած ժամանակ՝ արյան  
խփելոց։ Նրա սիրտը նվազում ե, քաշվում, ձգվում  
վորպես ռետինի կտոր։ Յեվ ահա... Ընկեր Բորիսը  
ավտոմատի պես կուանում ե...»

Ընկեր Բորիսի յերեսին, ականջներին, աչքերին  
ավելի ուժգին ե խփում անիվների զայրացած հողմը։  
Ընկեր Բորիսը շնչասպառվում ե։ Ընկեր Բորիսը գո-  
ռում է այստեղ, ցած, դեպի անիվների դղբոցը։

— Ավելի արագ... ըագ... ա-ա-ա... առաջ...  
առաջ...»

Վերջին բանիմաց, զիմադրող միաքը մոխրագույն  
թռչունի պես ճախրում ե ընկեր Բորիսի գլխով։ Ընկեր  
Բորիսը ցնցվում ե, ուղղվում, նայում ե իր շուրջը; Ի՞նչ  
ե դա։ Վորանեղ ե հազար տարվա կուլտուրայի  
դրոշմը...— շնչում ե նա։ Բայց շուրջը գիշեր ե, խա-  
վար, դղբոց, մոնչյուն, հողմ։ Մոխրագույն թռչունը  
յերեսում ե և անհետանում։ Ընկեր Բորիսի ձեռները  
ավելի ջղաձգորեն, մատները ճրթճրթացնելով, հուզ  
են տալիս սառած բունատեղերը։ Ընկեր Բորիսի մար-

մինը քար ե և քարի պես պինդ նա նորից կոանալում՝  
ուղղում ե իր դեմքը ցած, այնտեղ, անիվների դըղը-  
դոցի ուղությամբ և...»

— ը-ա-ա-գ... ո...ա... ջ...

Գաղանի գոռոցն եր, անմիտ, վայրենի, ցնծացող:  
Յերեկ այդպես եր գոչում ընկեր Բորիսի մազոտ  
նախնին թշնամու գլուխը դագանակով ջարդելիս։ Ըն-  
կեր Բորիսը գոռում է, վունում ե, ցնցումներից  
ուժասպառվում... Դղբոց, ճայթյուն, թրիկոց...»

Յեվ հանկարծ...»

... Ուսի վրա մեկի ձեռն ե։

Միլաը ցնցվում ե — սուր ցավ ե բերում։ Ակըն-  
թարթը թռչում ե կեափ նման արագ։ Իսկ կեան ել  
բավական ե։ Կիզված ուղեղից հոսանք ե գալիս։  
Մկանները վառվում են և ամրանում։ Ընկեր Բորիսը  
արգեն պոկված է տարերային անդունողից, և անսպա-  
սելիության ճիշը բոնվեց կոկորդում։ Արդեն դիտ-  
մամբ՝ ընկեր Բորիսը միենույն կուցած դրության  
մեջ մնում ե ելի մի վայրկյան։ Զի շտապում։ Հետո  
շուռ ե գալիս և ուղղվում։»

Նրա առաջ հոգեմաշ հարցի պես վառվում ե  
պապիրոսի կրակը։

Ընկեր Բորիսը կրակ ե տեսնում դեռևս վոչ ռեալ,  
դեռևս կարծես մառախուղի մեջ։ Կրակը պար ե  
գալիս հարցի նման։ Իսկ ընկեր Բորիսի ուղեղի  
մեջ մոխրագույն, պղտոր թռչունի պես արդեն մի  
միտք ե ծագում, արդեն մարդագարի հանդուգն մի

միտք: Հնկեր Բորիսը անհանգիստ մատներով դանդաղ դուրս ե քաշում պորտափարը, չշտապելով պապիրոս և հանում:

— Թույլ տվեք վառել, բժիշկ:

Զայնի մեջ — պղտորությունն ե, և պղտորության միջով՝ խուլ ժպիտը:

— Խնդրեմ... Կարծեցի... կուցաք՝ կանչում եք... վատ եք զգում... — շփոթված ասում ե բժիշկը: Նա ավելի զգաստ ե, — յերկի քնել ե, ուշքի յեկել:

Իսկ ընկեր Բորիսը՝

— Դուք իրավացի յեք, բժիշկ: Ուուսաստանը գցած ե ոելսերի վրա և առաջ ե ընթանում այնպես, ինչպես ահա այս գնացքը... զլիսապատառ: Յեկ զիտեք, մենք արդեն Յեվրոպան արշավեցինք: Յերեակայեցեք միայն, մենք, ձեր կարծիքով, Ասիա յենք, իսկ Յեվրոպան դարձյալ յետ ե մնացել... Ահ, սատանան տանի, — ուրախ ծիծաղեց նա, կարծես հիշելով, — դա իսկապես ձեր վոճն ե, սիրելի բժիշկ: Այդ դուք պետք ե ասեք, այլ վոչ թե յետ... Այսպես ուրեմն՝ Յեվրոպան արշավեցինք: Արշավեցինք՝ չնայած նրան վոր մենք — Ասիա յենք: Հնացել ե Յեվրոպան: Զե՞ վոր դուք, թանկագին բժիշկ, այժմ կհանդիպեք ֆրանսիացու, հույնի, անգլիացու — ինչի՞ մասին կխոսեք նրանց հետ: Զե՞ վոր կուսուցանեք, կուսուցանեք: Ճիշտ չե՞: Մենք մի ինչվոր բանով Յեվրոպայից բարձր դարձանք... Ահա, բժիշկ, — Սմոլնիյից պաշտոնեական գործուղղման գնացող ընկեր Բորիսը դարձյալ

բարձրաձայն ծիծաղեց, — այդ դուք եք երեկ ինձ վարակել ձեր Ուուսաստանով՝ ուուսական բարայի վեդրոյով:

Բժիշկը մթությունից լուռ նայում եր նրա վրա: Լուռթյան մեջ զգացյում եր ապշություն:

— Իսկ Յեվրոպայի հեղափոխության և ուսումազու մուժիկի մասին մի անհանգստանաք: Յեվրոպայում հեղափոխությունը անպատճառ կցա: Յեկ վոչ թե հանուն ցնորքի, ինչպես զուք յենթադրում եք, այլ ուղղակի... կապիտալիստական հարաբերությունների զարգացման որենքի ուժով: Կասեք, վոր այդ ել մի տեսակ ձևականություն ե: Ինչ անենք, յեթե դրան հավատում ենք: Վոչ միայն հավատում ենք, այլ և զիտենք: Իսկ մենք, թանկագին բժիշկ, կաշխատենք արագացնել այդ հեղափոխությունը: Մենք նրան սկինների վրա բարձրացրած Յեվրոպա կտանենք... Հահա... Աշխարհին խաղաղություն, աշխարհին յեղբայրություն, աշխարհին հավասարություն և յերազանք կտանք սվինի ծայրի վրա: Ճիշտ չե՞, վոր հրապուրիչ հեռանկար ե: Դուք վրդովված եք, զայրացած, ահաբեկված, — չե՞ վոր ճիշտ եմ ասում: Իսկ մենք կտանք: Յեկ զիտեմ, մինչև վերջը կտանենք և Յեվրոպայի վրայով անցած ձեր ահավոր վոգու նիշատակը կվոչնչացնենք: Ահա, բժիշկ, ... այլ կերպ վոչինչ չեք անի: Հիշեցեք պատմությունը. բոլոր մեծ ուսմունքները, բոլոր մեծ կրօնները խեղճ մարդուն արվում ենին սրի ծայրի վրա: Անգամ սիրո կրօնները, որինակ քրիստոնեությունը: Յեկ կոմունիզմը բացառու-

թյուն չե, թանկագին բժիշկ։ Այդպես ե մարդս։ Այդ-  
պես եր, այդպես ե, բայց այդպես չի լինի, — յես  
դրան հավատում եմ։ Նույնպես և իդուք դուք մեզ  
մտաղիք եք խաչ հանել։ Դուք կխաչեք, իսկ մենք  
յերրող որը հարություն կառնենք... ըստ գրվածի։  
Մենք ժամանակ չունենք կասկածելու, տանջվելու...  
Հա, այս, մազոտ մուժիկը, արեխավոր մամոնտը ևս։  
Դա, ձեր խոսքերով արտահայտվելով, մի տեսակ ուսու-  
պիս յե։ Այս բանում յես պիտի ասեմ, վոր դուք վոչինչ  
չեք հասկանում։ Նարոդնիկության հոտ ե փշում դրա-  
նից։ Ընդհանրապես, իմացեք վոր, յեթե մազոտ ե նա՝  
կսանրենք։ Ահա, բժիշկ... Դեհ, ի՞նչ եք նայում, —  
ուրախ ծիծաղեց ընկեր Բորիսը, — կարծում եք, վոր  
խելագաղը եմ։ Զե, չե, բժիշկ։ Դա պելի պարզ ե, —  
դա տարերային ե։ Դղրդոց, շաջուն, գիշեր, քամի, —  
դրա համար ել աղաղակում ելի։ Ամեն մեկի մեջ նրա  
մի կտորը թագցրած ե, և ձեր մեջ ել կա։

— Դա տարերայինը չե, դա ոստականն ե, և ձեր  
ուսուպիաները, կարծեմ, այդտեղից են, — լրջորեն  
ասաց բժիշկը։

— Ուզում եք ասել, վոր ձեր վեգրոյիցն ե  
վորսած։

— Զե, չե, չհասկացաք...

— Հասկացա, հասկացա։

Այս ժամանակ մի խառնեք... լսեցեք, — դարձյալ  
լուրջ տոնով խոսեց բժիշկը, — դուք ինձ զարմացնում  
եք։ Զե վոր դուք ձեղ կորցրած ելիք։ Յես հինգ ըոպե

ձեղ հետեւում ելի՛ մինչև վոր շոշափեցի։ Յեթե ձեր  
ամենքիդ ներվերը այդպես են, ապա...»

— ... Կարծում եմ, վոր Ռուսաստանը տեղ կհասնի  
և ձեր վեգրոյի ջուրը չի թափթփվի, — ուրախ վեր-  
ջացրեց բժշկի նախադասությունը ընկեր Բորիսը։

— Բայց... սպասեցէք...

Սակայն ընկեր Բորիսը նորից ընդմիջեց։

— Վաղը, վաղը, բժիշկ։ Մի բարկանաք։ Գնանք  
քնելու։

Ընկեր Բորիսը վագոն ե գնում։ Բժիշկը նայում  
ե նրա յետելից և մտածում։

«Գաղաններ եք դուք, գաղաններ, ուժեղ, գիշա-  
տիչ գաղաններ։ Սրաերի տեղ ձեր մեջ հնգածայր  
աստղեր են։ Յեվրոպան իսկապես հնացած ե ձեղ  
համար։ Կարշավեք Յեվրոպան, կարշավեք»...



ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԻՒՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵԿՅԱԾ

## ԼՈՒՅՍ ՏԵՍԱԾ ԳՐՔԵՐԻՑ ՊԱՀԵՍՏՈՒՄ ԿԱՆ ՀԵՏԵՎՅԱԼՆԵՐԸ

(Սակալաթիվ որինակներ)

<b>8 ԱՆԿ</b>	Եջ
Ա. ՖԱԴԵՅԵՎ. — Կոմիսարները: Թարգմ. Մ. Աղայանի . . . . .	3
Գ. ՆԻԿԻԹՈՐՈՎ. — Կամ ես, կամ են... Թարգմանութ. Մ. Աղայանի . . . . .	21
Ս. ՍԵՐՅՈՆՈՎ. — Ամենից առաջ կուսակցության միասնականությունը: Թարգմ. Մ. Աղայանի . . . . .	49
Ս. ՍԵՐՅՈՆՈՎ. — Հինգ հարյուր հազար: Թարգմանութ. Հ. Կոսիկյանի . . . . .	63

Ազգային Հարց,—ի. ՍՏԱԼԻՆ . . . . .	1 ռ. 60 կ.
Գյուղացիական Հարց,—ի. ՍՏԱԼԻՆ . . . . .	50 »
Լենին. — Պատգամներ ժողովրդ. լուսավորության մասին . . . . .	20 »
Լենին. — Պատգամներ յերիտասարդության . . . . .	15 »
Համ. Կոմիտոսի (բ) պատմությունը, — [REDACTED] . . . . .	1 ռ. 50 կ.
Ռազմովիցին հոսանքները Համ. Կոմ. Կուս. (բ) Ենթառակ . . . . .	20 »
Բոլշևիկների կուսակց. 1917 թ, ՅԵՄ. ՅԱՐՈՍԼԱՎԿԱԿԻՑ	85 »
Ինչ սկից Հոկտեմբերը բանվորներին, — [REDACTED] . . . . .	20 »
Սոցիալիզմի ուղին, — Ն. ԲՈՒԽԱՐԻՆ . . . . .	1 ռ. 25 »
1905 թ. մեր Լին բան, զյուղ. հեղափ.—ի. ՖԼԵՇՈՎ. ՍԿԻՑ	70 »
Քաղաքական բառարան, — կազմեց Վ. ԱԲՐՈՒՄՅԱՆ (656 էջ) 2 ռ. —	—
Պատմական մատերիալիզմի ալբուրենը . . . . .	80 »
Պայմանագիր 1917 թ. սկիզբանական 10 տարի, — ՆՈՎ. ԱԿՈՎ. ՍԿԻՑ	70 »
«ի. ՍՏԱԼԻՆ» (համառ. կենսագր.) . . . . .	7 »
Ինչպես աշխուժացնել գյուղխորհուրդները, — Զ. ԼԱՎՐԵՆՑԵՎԵՎ	30 »
Պատերազմ չենք ուզում, բայց դիմադրելու պատրաստ ենք . . . . .	10 »
Ինչով ե ուժեղ կարմիր բանակը, — [REDACTED] . . . . .	15 »
Մերոդական ձեռնարկ (ուսուցիչների համար) . . . . .	70 »
Նոր-դպրոցի ճանապարհին (ժողովածու, 480 էջ) . . . . .	2 ռ. —
Հասարակագիտությունը Լին ասիմանի դպրոցում, —	65 »
Գեղջկուհին յեվ յերեխանները, . . . . .	25 »
Տգիտությունը յեվ սեահավատությունը, — Վ. ԴԻՐԻՏՐԻՑԵՎ	15 »
Ի՞նչպես ե սարգված սիյեղերքը, — Գ. ԳՐԱՎ. Ե (նկարագ.)	50 »

Արելը, նրա վորդիները յեկ բռնները,—Բ. ՍԵԼԻՑԿԻՆ (նկ.)	40 կ.
Ինչպես ե առաջացել յեկ զարգացել կյանքը յերկրի վրա, Մարդու յեկ կենդանիների ծագումը,—Դ. Ա.ԳՈԼ (նկ.) .	50 »
Մարդու մենակ,—Մ. ԳՐԵԼՅՅԱՅԿԻՑ (նկարագրդ) . . . . .	35 »
Մարդու անտեսանելի թենամիներն ու բարեկամները,— Վ.ՈՐՏԸ, կայծակ, ելեքտրականուրյուն,—ԳՐԵԼՅՅԱՅԿԻՑ (նկ.)	45 »
Պատաճի Պիոներ (ժողովածու, նկարագրդ) . . . . .	20 »
Պիոներ, հետեւիր Լենինի պատգամներին . . . . .	40 »
Հոկտեմբեր (համառու պատմ.) . . . . .	60 »
Մեր ակադ յեղայրները — Կոմյերիտականները . . . . .	20 »
Քաղցրագիտության դասազիրք կոմյերիս. համար պրակ I .	10 »
	» II .
	» III .
Հակոբ Պարոնյան (թեսիր յերկեր), պրակ I . . . . .	45 »
Հակոբ Պարոնյան » » » II . . . . .	40 »
Հակոբ Պարոնյան » » » III . . . . .	35 »
Պատմվածքներ,—Ա. ՍԵՐՈՅԵՒՐՈՎԻԿԻՑ . . . . .	35 »
Մայր, — Ֆ. ԲԵՐԵԶՈՎԾԿԻՑ	45 »
«Չապայեվ», — Դ. ՅՈՒՐՄԱՆՈՎ . . . . .	45 »
Հոկտեմբերյան պատմվածք, — Ա. ՅԱԿՈՎԼԵՎ . . . . .	50 »
Զալացզան Ռոտայ, — Ա. ՖԼՈՐՈՎ . . . . .	20 »
Գայլիկ, — Ֆ. ԳԼՈՒԿՈՎ . . . . .	20 »
Կանդապների պատմուրյուն, — Ն. ԼՅՈՅԿՈ . . . . .	25 »
Զորացող թեվեր, —	20 »
Արտասովորը, — ՄԱ.ՔՍԻՄ ԳՈՐԿԻՑ . . . . .	25 »
Մրցիանավի յերզը, յեկ ուրիշ պատմ. — Մ. ԳՈՐԿԻՑ .	40 »
Յերիտասարդ գրողը: Մարդու, —	15 »
Թե ինչպես Սաֆոն կարմիր-բանակային դարձավ,— Ա. ԿՐԱ.ՎԵՆԿՈ	15 »
Յերկրաչափ (պատմվածք), — Գ. ԿԱ.ՅԱՏ . . . . .	35 »
Ընկեր Վայա, — Մ. ՅՈՒՐԻՆ . . . . .	25 »

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԶՄՐԴ ԳՐԲՈՒՅՑԿԱՆԵՐ, 25 անուն  
ԳՅՈՒՂԱՅԻԱԿԱՆ ԳՐԲՈՒՅՑԿԱՆԵՐ, 8 անուն  
ԱՌՈՂ.ԶՍՊԱՀԱԿԱՆ ԳՐԲՈՒՅՑԿԱՆԵՐ, 6 անուն  
ԴՊՐՈՅՑԱԿԱՆ ԶԱՆՈԶԱԿԱՆ ՊԵՏՈՒՅՑԲՆԵՐ (հայերեն տեսան):

### ՆՈՐ ՀՈՒՅՍ ՏԵՍԱՆ

ԼԵՆԻՆ. — 1914 — 18 թ. թ. Պատերազմի մասին (376 էջ) . . . . .	1 ու.
Աշխատակցության արթերում, — Վ. ԲԻՍՏՐՅԱՆՆԿՈՒԻ յեկ Վ. ՄԻԼՅՈՒՏԻՆԻ	25 կ.
Ինչ ասած կուսակցության XVI կոնֆերենցիան, — ԼՈՅԵՆԿՈՅԻ	20 »
Հեռագիր, հեռախոս, ռադիո (նկարագրդ) . . . . .	25 »
Ասծու յեկ աստվածածության մասին (նկ.) . . . . .	30 »
Խազմի ուեր, — Ն. ՈՂԵՑՆԿՈՎ	20 »
Պայքար աջ վտանգի յեկ հաւաքողականուրյան դեմ . . . . .	23 »
Կոմինիսերնի VI Կոնգրեսի վորուստները . . . . .	30 »
Կոմինիսերնի տար տարին . . . . .	18 »
Կոմունիստները (պատմվածքների ժողովածու)	40 »
Չօրս բալլադ, — Ֆ. ՇԱՀԱՐ	15 »
Սպիտակ ձին, — Խ. ԽՈՎԱՆԻԿՈՎ	35 կ.
Հովկի հիւստակարանը . . . . .	15 »
Բոյլը. կուս. ինչպես ե պատապանում բատրակի տանիքը . .	15 »
Բատրակության յեկ հովկության սոց. ապահովագրությունը	15 »
Ինչպես պետք ե աշխատի զյուղանկումի վերաբնիշ հանձնամունքը . . . . .	20 »
Մեր տնտեսությունը 5 տարուց հետո . . . . .	10 »
Հիւիր պատերազմը . . . . .	15 »

### ՄԱՄՈՒԷԼԻ ՏԱԿ ԵՆ

Վ. Ի. ԼԵՆԻՆ. — 1) «Ի՞նչ անել», 2) «Մի բալ առաջ, յերկու բալ յես»,  
(ընդամենը 50 մամուլ): 3) Լենինը զյուղացիության մասին:

Պ Ա Հ Ա Ն Զ Ե Ց Ե Ք  
ՄԵՐ ԳՐԱՅԱԿԱՆԱԿՐ, Վ. Ա. Բ.  
ՈՒՂԱՐԿՎՈՒՄ Ե ԶՐԻ.  
ԳՐԱԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ  
Մոսկվա, Никольская, 10.  
ЦЕНТРИЗДАТ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0328050

14.660

30 ԿՈՊ.



## КОММУНИСТЫ

(Сборник худож. рассказов)

На армянском языке

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ С. С. С. Р.  
Москва, центр, Никольская, 10

891.21

8 - 14